

8755

14465

Emerson Zuchwile

Sapp-e

1912

891.99

G - 16

Անձագիր "Ա.ՇԽԱՏՈՎՈՒԹԻՒՆ", լ. թիւ 8

8755

ՀԱՅԱՆ ՆԱԹԱԼԻ

14


ՄԱՐԴԵԼ

ԸՆԿԵՐՈՅՑԻՆ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳ ԱՐԱՐԻԱՆ

ԱՄԷՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ Է ՀԵՂԻՆԱԿԻՆ

Հրատարակ. Ա. ԹՈՒՔԱԶԵԱՆ ԳՐԱՍԱՆ



ՀԱՅԱՆ
2003

ԻԶՄԻՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԺՇԽԵԱՆ

1912

Ենթ Հայոց Դաւիթ
Տագավորութիւն

Մատենաշար "Ա. Շ. Ա. Ն. Վ. Բ." թիւ 3.

891.99

Դ-16

ՀԱՅԱՆ ՆԱԹՈՒԼԻ


ՄԱՐԴՔ

ԸՆԿԵՐՈՅԻՆ ՀՈ.Ա.Պ.Կ.Կ.Ա. ԹԱ.ՏՐԵ.Գ.Ա.Թ.Ի.Ի.Ն

ՀԻՆԳ ԱՐԱՐԻԱՆ

ԱՄԷՆ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ Է ՀԵՂԻՆԱԿԻՆ

Հրատարակ. Ա. Թ.Ա.Բ.Ա.Ճ.Ե.Ա.Ն ԳՐԱԾԱՆ



8255

ԻԶՄԻՐ

ՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ ՖԷՇԻՇԵԱՆ

1912

ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

- ԶԱԻՆ.** — 27 սարեկան նիհար, միջահասակ երիտասարդ մը, ածիլած պէխով, սառապած դէմքով, ակնոցաւոր ուսանող փաստափանութեան:
- ՏԻՐԱՆ.** — 30 սարեկան նիհար երկարահասակ երիտասարդ, ծանօթ-ընկեր Զաւենի. ուսանող աստւածաբնութեան:
- ՕՆՆԻԿ.** — 27 սարեկան, կայտառ, առոյգ, խարտեած պէխով երիտասարդ գործաւոր, ընկեր Զաւենի:
- ՎԱՀՀ.** — 30 սարեկան, անպէխս, սառապած, զարգացած երիտասարդ, ընկեր Զաւենի:
- ՀՄԱՅԵՍԱԿ.** — 30 սարեկան, անպէխս, չարամիտ դէմքով գործաւոր. Զաւենի կելջարեկամ եւ հակառակորդ: Ամերիկունի գործաւորունի: Երբեմն ինկած աղջիկ, թխադիմ բայց սիրուն աղջիկ մը. 22 սարեկան, Զաւենի կենակիցը:
- ՔԱՐՔԻՐԻՆ.** — Խարտիսահեր, գեղեցկադէմ ամերիկունի մը. Զաւենի դասրնիւրունի եւ սիրունի:
- ՔԷՅՑԻ.** — Զաւենի բնակած տունին տիրունին, 40ր անցուկ, գործակից Հմայեակիր:
- ՈՒԻԼԱԾԼՆ.** — Գործարանի հսկիչ, երիտասարդ:
- | | | |
|-----------------|--|----------------------|
| ՃՈՐՃ | | Բանքով գործաւորներու |
| ՄԱՐՅԻՐՈՍ | | |
- | | | |
|----------------|--|------------------|
| ՍԷՄԻ | | Կարեւոր անդամներ |
| ՈՒԻԼԵԼՍ | | |
- | | | |
|---------------|--|------------------------------------|
| ՃԱԶԻ | | Ծեր գործաւոր, բանքովներու հակառակ: |
| ԴԱՅԱՐ. | | |
- Դատաւոր, փաստաբներ, դատարանի բարունքաներ, փոլիմեր, գործաւորներ, գործաւորունիներ, ժողովուրդ եւ այլն:

Ա Ր Ա Ր Ի Ա Ծ Ա .

Թեմի կը ներկայացնէք երկու սենեակներ, աշ կողմը պզախկ սենեակ մը՝ ձախ կողմէն մէկ պատուհանով, կրնակէն դուռ մը, սենեակները բամնող պատի երկայնքին դրւած անկողին մը (բառնեն), պատուհանին առջեւ երկու արուներ՝ պզախկ սեղանի մը շուրջը, սեղանին վրայ թերքեր եւ գիրքեր, կազմար մը ու գրիչ, սեղանին վերեւ պատէն կախած պատի օրացոյց մը պատկերազարդ, առջին անդին ուսանողի յատուկ տարկաներ, անկողին բով լար կախելու դարակ մը՝ վարագոյրով զատւած: Զաւենի սենեակն է աս: Թեմին երկրարդ մասը աւելի մեծ սենեակ մը եւ աւելի նոխ կախաւորաւած. աշ կողմէն երկու պատուհաններ, կրնակէն դուռ մը. պատի երկայնքին զեղեցիկ մասնակալ մը, երկու պատուհաններուն մէջտեղ աւելի խոշոր սեղան մը. ասդին անդին բիկամուններ, պատուհաններէն առկայ տամբէլ վարագոյրներ, անկողինին ուսէի կողմը լար կախելու դարակ մը դուռով. պատերը զարդարած աղջիկներու պատկերներով, պզախկ պիւլո մը հայելիս, պիւլովին վրայ լացւելու կոն մը եւ ջուրի աման եւ այլն: Հմայեակն սենեակն է աս:

Տ Ե Ս Ա Լ Ա .

[Վարագոյրը բացուելուն հետ Զաւենի սենեակը կը մտնեմ]
Օննիկ, ՎԱՀՀ եւ ՏԻՐԱՆ

ՕՆՆԻԿ. — [Առոյգ ու համարձակ ներս մտնելով] Հոս չէ. տակաւին չէ եկեր. ո՞վ գիտէ այսոր ո՞ւր գացեր է:

ՏԻՐԱՆ եի ՎԱՀՀ. — [Ներս մտնելով] Երթանք ուրիմն, կարելիք է դուրսը կը հանդպինք:

ՕՆՆԻԿ. — [Խսիր զիխարկը անկողինին վրայ նետելով ինքն ալ կ'երկննայ անոր վրայ] Ո՞ւր պիտի

երթանք . սպասենք , հիմա կուգայ , ուր գացած
պիտի ըլլայ :

ՏԻՐԱՆ .— [արու մը առնելով] Անշուշտ գործ
փնտահլու գացեր է : Այս առառու տեսայ զի՞նքը ,
ձեռքը «կլօպ» մը լնկնաւծ կ'երթար :

ՎԱՀԵ .— [բախելով տիսուր] Խեզձ տղան չկըցաւ
գործ մը գտնել . ձախողութիւնը ամէն կողմէն
միեւնոյն ատեն կուգայ : Անդամ մը գպրոցը լը-
մընցնէր , անցնէր երթար , այստեղ իր տեղը չէ :

ՕՆՆԻԿ .— [պառկած տեղեն] Գախնամ այս առա-
րի չկրնայ շարունակել . արգէն վագանցին ա-
միսու կէսը անցաւ և տակաւին գործ մը չկը-
ցաւ գտնել . ի՞նչպէս պիտի կրնայ վճարել գըպ-
րոցին թօշակը :

ՎԱՀԵ .— Այսպէս ուսանողութեան խերն եմ
անիմեր . կէս կուշտ կէս անօթի կեանք քաշըը-
շել կ'ուն սսր : [իսուքը Տիրանին ուղիելով] ի
ընես , բախտի գտեր ես , ապրուստի հոգը , գըպ-
րոցի մտածումը չունիս և պէտք եղած ատենն
ալ բացառիկ պատեհութիւններ : Մարդ Ամերի-
կայի մէջ աստւածաբանութեան ուսանող ըլլալու
է : [ենքը փոխելով] Բայց կատակը մէկ կողմ .
Տիրան , չե՞ս կրնար սա քու ժանօթ մինիսրը-
ներուդ միջոցով բան մը լնել Զաւէնին համար .
անոնք ամէն բան կրնան ընել եթէ ուզեն :

ՏԻՐԱՆ .— Եղբայր , քանի անդամներ առա-
ջարկած եմ . նո՞ , անկարելի եղած է զի՞նքը հա-
մոզել . երկու կիրակի եթէ ինծի հետ եկեղեցի
եկած ըլլար՝ բոլորին հետ կը ծանօթացնէի և
հիմա ամէն բան կարգագրաւած էր . Զէք գիտեր
ի՞նչ նշանակութիւն ունի անոնց համար եկե-
ղեցի երթալը . այնպէս կը հաւատան թէ՝ ով որ
եկեղեցի կ'երթայ , ա՛լ լաւ մարդ է , իսկ մինիս-

թըրի մը յանձնարարականով գործ ուզելու գա-
ցող մը՝ անպայման առանց գործ ունենալու ետ
չգառնար : Իսկ Զաւէնը մեր ձանչցածն է : Ան-
ցած օր նորէն յուսահատ կը մտածէր՝ երբ իրեն
կրկնեցի մտածում , սակայն ան հայրոյելով «՛չ
եկեղեցի կ'երթամ ո՛չ գպրոց՝ եթէ գպրոց եր-
թալուս անհրաժեշտ պայմանն է եկեղեցի եր-
թալ» պոռաց երեսիս՝ Երթալով աւելի ջղագըր-
գիս կ'ըլլայ , կը կատղի երբ եկեղեցիի անունը
կուտաս . այսքան ծայլայեղ ու մոլեզին հակա-
ռակութիւն չաեսնուած բան է :

ՕՆՆԻԿ .— [օսկելով եւ կատակելով] Անշուշտ
այդ խօսքերը վիրաւորիչ են քեզ համար . չէ՞ ,
Տիրան : [կը խնդայ]

ՎԱՀԵ .— Զաւէնի խօսքերը երբեք չեն վի-
րաւորեր , այնքան անկեղծ են անոնք :

ՏԻՐԱՆ .— Եթէ Զաւէնի խօսքերէն վիրաւոր-
ւիմ , հետը ընկերութիւն չեմ լներ : Ի՞նչ հոգս
թէ՝ Զաւէնը ի՞նչ կ'ըսէ . ամէն մարդ իր առան-
ձին համոզում ունի : Ան կը կարծէ աշխարհը
բարեկարգել , և այդ ծրագրին մէջ կարծես ա-
ռաջին տեղը տւեր է եկեղեցիները քանզելուն ,
իսկ ես կը հաւատամ թէ՝ եկեղեցիները իրենց
գերը ունին և թէ՝ Զաւէնը չէ որ պիտի կրնայ
եկեղեցիները քանզել , իսկ ես իրը ապրող ա-
րարած անոր կը զործեմ , իչնպէս գուն՝ գործա-
տէրին :

ՎԱՀԵ .— Կեցցես , Տիրան , այդ վերջին խօսք
ամբողջապէս անկեղծ էր , իսկ թէ՝ եկեղեցիներն
իրենց գերը ունին , ես ալ Զաւէնին հետն եմ ,
ըսկու համար որ եկեղեցիները իրենց գերը ա-
ւել իրման ալ իտացեր են արդէն :

ՕՆՆԻԿ .— Այդպէս ա՛ , Տիրան , ըսկէ է ասու-

ւածաբանութեան հետեւիլդ ապրուստի մը խընդիր է : [կը կտէ խօսքը տեսնելով Զաւենք, որ «Կոյա» մը ձեռքը կ'ըեւնայ սեմին վրայ]: [Ետկելով] Ա՛, եկա՛ւ, եկա՛ւ . . . [Զաւենք ընկերները տեսնելով ժպիս մը կը շինել]:

ՏԵՍԻԼ.Բ.

ՆՈՅՆԵՐ ԵՒ ԶԱՀԻՆ

ԶԱՀԻՆ .— [Գլխարկը քերքին հետ մեկտեղ սեղանին վրայ նետելով] Օ՛Ֆ՛Փ . . . այնպէս յոզնած եմ որ . . .

ՕՆՆԻԿ .— [ցատկելով իր տեղին եւ Զաւենք սեղմելով] Ո՞ւր էիր, Զաւէ՛ն :

ԶԱՀԻՆ .— Սուս եղիր, մինչեւ հիմա տասը տեղ գացի, բոլորն ալ պարապ : [կը նսի քառունին վրայ, Օննիկն ալ հովը] Ի՞նչ անբախտութիւն է աս . գործելու փափաք, գործելու յօժարութիւն ունենալ և գործ չկրնալ գտնել . ի՞նչ աշխարհ է աս :

ՎԱՀՀԻ .— Գոռէ յոյս մը :

ԶԱՀԻՆ .— Եթէ Ամերիկա նոր եկած ըլլայի, ամէն տեղ յօյս կար : «Նորէն եկուր», աս է ամէն տեղի պատասխանը . իսկ մինք շատ լաւ կը հասկընանք այս երկու բառին խմաստը : Հաւատա՛ց վահէ՛, ոճրագործ ըլլալը ոշինչ է այս աշխարհին մէջ . մարգեր, որոնց դաստիարակները ըլլալու սահմանուած ենք, այդ մարգերէն գործ մուրացողներ եղած ենք : Ինձի մի՛ բաէք որ ծայրայեղ եմ մտածութիւներուս մէջ . ես այս ընկերութեան մահացումին կը հաւատամ հոգիս բոլոր ուժովը :

ՏԻՐԱՆ .— Ա՛ռ, նորէն սկսաւ :

ԶԱՀԻՆ .— [նեղացած] Ես չսկսիմ ո՞վ սկսի ապագո՞ւն : Ի՞նչ ընես, գտեր ես փառքդ :

ՏԻՐԱՆ .— Քու ձեռքդ ո՞վ է կապեր :

ԶԱՀԻՆ .— Իմ ձե՞ռքս : [կարճ լրաւթիւն մը . շեշը փոխելով] իրաւունք ունիս, Տիրա՛ն, իրաւունք ունիս: Որովհետեւ չեմ այն՝ ինչ որ կ'ուզեն որ ըլլամ : [սուր] Բայց ես այս տառապանքիս ու արտունջիս մէջ, Տիրա՛ն, ճշմարիս որ շատ աւելի երջանիկ եմ, քան ինչ որ պիտի ըլլայի եթէ քու բախտաւորութիւնդ ունենայի: Մասնումի խնդիր է, գիտե՞ս . մի՛ ցաւիր :

ՎԱՀՀԻ .— [արռու մը առնելով] Ի՞նչ, նո՞ր իրար կը ձանչնանք որ իրարմէ ցաւինք : Ճիշդ քիչ մը տասջ նոյն բանին վրայ կը խօսէինք :

ՏԻՐԱՆ .— [լինդմիջելով] Զէ՛ Զաւէ՛ն, չէ , մինք ուրքան ալ մտածութիւնը իրարու չհաշտինք, իրարմէ չենք ցաւիր : Քու խօսքերդ ըլլամ արգէն ձանօթ են ինձ :

ՕՆՆԻԿ .— [ցատկելով քառունեկը՝ ձերեւը տափախն գրպանը դրած] Է՛՛, երկար ըրիք . աւ բան չկա՞յ: ԱԵ՛, Զաւէ՛ն, գրացուհիդ ի՞նչպէս է :

ԶԱՀԻՆ .— Լոէ՛, ծօ՛, [ինեղնանենվ] ասուածաբանութեան ուսանողի առջեւ անբարոյական բաներու մի՛ սկսիր նորէն :

ՕՆՆԻԿ .— Զէ՛, ալ ինչ : Իրը թէ Տիրանը մեր չճանչցածն է . ուրիշին քահանայ բայց մինք գիտենք ինչ սատանայ է : Ինչո՞ւ, չե՞ս իմացեր որ «հասած տանձը արջը կ'ուտէ» կ'ըսին : Ինչե՞ր չեն ըներ սա մեր տէրտէրներն ու պատելիները :

ՎԱՀՀԻ .— Է՛ ի՞նչ ընեն խեղձերը :

ՏԻՐԱՆ .— Զէ՛, աղդ պառուղին քաղցրութիւնը մինակ աշխարհականներուն տրւած է հասկնալ : [կը խնդայ]

ՕՆՆԻԿ .— Զէ՛, չէ՛ . գիտե՞նք որ շատ լաւ կը հասկնան անոր համը : Վահէ՛, իրաւ ի՞նչպէս էր

ան վարդապետին պատմութիւնը . անցած օր կ'ըսէիր :

ՎԱՀԵ .—Վազ անցիր ճանըմ : [Տիրանին] Բայց
Տիրան զգոյշ , ուրիշ տեղ չըսես այս խօսքերը :
ՏիրԱՆ .—Հոգդ մի՛ լոներ :

ՕՆՆԻԿ .—Տիրանը թաց տեղ չպառկիր . ան
գիտէ գործը գլուխ հանելուն կերպը : Ան զիտէ
թէ ՞՞ մէկ քրիստոնեայ տիկինին քէյֆը բերե-
լու է նպատակին հասնելու համար :

ՎԱՀԵ .—Իրաւ , Տիրան , խօսքը մէջերնիս ,
մինչեւ ՞՞ հասաւ Տիկ . Լայրնսի խնդիրը . բա-
ւական ատեն է բան մը չես ըսեր , ձգէ որ եր-
կար ատեն էր իրար չէի՞ք տեսեր :

ՕՆՆԻԿ .—Իրա՞ւ չես զիտեր . արդէն եփած է :
«Հէմ զիարէթ , հէմ թիձարէթ» : Տիրանին ՞՞ ր-
կէ գրամ որ այսպէս ապրի . Տիկ . Լայրնը թող
ողջ մայ :

ՏիրԱՆ .—Մարդ իսկապէս կը խզճահարի՝
տեսնելով թէ՝ ի՞նչպէս խռած ծերուկ մը այդ
հրեշտակի պէս մատղաշ աղջիկին հետ ամուս-
նացեր է : Աղջիկ մը ունի ճիշդ իր տարիքը :
[Զաւենին] կը ճանշնաս չէ , Զաւէն , ձեր հա-
մալսարանը կ'ուուանի :

ՕՆՆԻԿ .—[Ընդմիջելով] Բան մը չընե՞ս . ապա-
գագ բարուուած կ'ըլլաց . դուն աղջիկը , Տիրա-
նը մայրը :

ԶԱՒԵՆ .—Ոչինչ ունիմ ըսելիք աղջիկին , սա-
կայն ան յերեք չկրնար իտէալս իրականացնել ,
ան չէ իտէալական աղջիկը՝ որ պիտի կրնայ կինս
ըլլալ : Նոյնիսկ բաւական մտերմիկ յարաբերու-
թիւն ունեցած եմ հետը , սակայն նո՛ :

ՎԱՀԵ .—Է՛ , խօսէ նայինք , Տիրան , սա տեղ
ա տեղ էջերէդ բաց նայինք :

ՏիրԱՆ .—Գոցէ՛ , պէտք չկայ . բաներ կան ո-
րոնց մասին չեն խօսիր այլ կ'ապրին :

ԶԱՒԵՆ .—Է՛ ՞ պատիւ , բարոյական , որր-
ութիւն , բարձրութիւն , միլիոնատիրուհի , կը-
դիրականութիւն . . .

ՕՆՆԻԿ .—[Ընդմիջելով] Պառնկութիւն :

ԶԱՒԵՆ .—Ես չեմ մեղադրեր անոնք , որավ-
չետեւ լնկերութեան զոներն են :

ՕՆՆԻԿ .—Դիւրին ապրելու միջոց , ինչո՞ւ չէ ,
փոխանակ առաւօտէն մինչեւ իրիկուն ինձի պէս
իւղերու մէջ , մեքենայի առջեւ քրտինք թա-
փելու՝ «կի՞ր , ա՛րք և ուրախ լե՛ր» , որովհետեւ
ասուածաբան են :

ՏիրԱՆ .—Այս աշխարհի մէջ կեանքը անորն
է որ գիտէ ապրիլ :

ՎԱՀԵ .—[Ճպիտով մը] Աս «ապրիլ» բառին-
տեղ «խարել» չըսէ՞ս :

ՏիրԱՆ .—Ի՞նչ կ'ուզես ան ըսէ , կեանքն ալ
արդէն խարկանք մըն է :

ՕՆՆԻԿ .—Զաւենի բով ցաւկելով որ լուռ կե-
ցած է] Ի՞նչ է նորէն , չխօսի՞ս : [կը նեղէ]

ԶԱՒԵՆ .—Խնդրեմ , Օննի՛կ , ձգէ , այնքան
յոզնած եմ որ խօսելու կարողութիւն անգամ չէ
միացեր . գուք խօսեցէք , ես մաիկ կ'ընեմ :

ՕՆՆԻԿ .—Ա՛ , ե՛լ գուրս երթանք . Ի՞նչ փակ-
ւած նստեր ենք , դուրսը գեղեցիկ օդ կայ . շա-
րաթ իրիւուն է , գիտե՞ս :

ԶԱՒԵՆ .—Շաբաթ իրիկուն է շաբաթականը
առնողին համար , ինձի ի՞նչ : Դուրս ելնելը դը-
րամ չունեցողին համար տառապանք է :

ՕՆՆԻԿ .—[Քաշելով] Ե՛լ , ծօ՛ , իմ գրամս քու-
կրդ է : Կ'ուզե՞ս [գրալանեն դրամ հանելով] կ'ու-
զե՞ս , ըսէ՛ , քանի տողար :

ՎԱՀԵ.—Ինծի չե՞ս տար, Օննիկ:
Օննիկ.—Գնա՞...
ՏԻՐԱՆ.—Ինծի՞:
Օննիկ.—Տիկ. Լայընսին գնա՞: [Կը խնդան]
Այս իրիկուն չե՞ս երթար, թէ՛ շաբաթ իրիկուն-
ները քու կարգդ չէ:
ՎԱՀԵ.—Թամարոն չերթա՞նք, տղա՞ք:
Օննիկ.—Երթանք: Տիրանը արդէն չկընար
գալ. մենք երեքս կ'երթանք:
ՎԱՀԵ.—Տիրանը մետաքսէ կ'արագոյներու
ետին ինք կը խաղայ, թատրոնն ի՞նչ ընէ:
ԶՈՒԵՆ.—Ես չեմ գար:
Օննիկ.—Համմէ՞, չե՞ս կրնար, կրնաս կրնաս...
[Բռնելով ու նեղելով] շարժէ՞ նայինք:
ՏԻՐԱՆ.—Ես պիտի երթամ: [Կը կանգնի]
ՎԱՀԵ.—Ինչու կ'աճապարես:
Օննիկ.—Է՛, անիկա մեզի չյարմարիր. սեն-
եակին մէջ լա՛ւ, ընկերներ ենք, բայց գուրսը
ան փրխրցու է, մենք գործաւոր:
ՎԱՀԵ.—Խելացի տղայ ես Օննիկ:
ՏԻՐԱՆ.—Հիանալի կերպով սրամմիտ դար-
ձեր ես, Օննիկ, մանաւանդ այսօր կ'երեւի մու-
սադ թառեր է:
Օննիկ.—Սրամմութեան բան չկայ. գուն ը-
սէ, չէ՞ որ փողոցին վրայ, քեզ մեզի հետ տես-
նող աստւածավախ ու բարոյասէր ծանօթներդ
կրնան քու մասին գէշ գաղափարւիլ: Մանաւանդ
որ ես անանկ աստւածաբանական ուսանող մու-
սանող չեմ խաղներ, կը նայիս, աղջիկ...
ԶՈՒԵՆ.—[Ընդհատելով] է՛լ, [Տիրանին] եթէ
աճապարելու մասնաւոր գործ մը չունիս, նստէ
Տիրան, բաւական ատեն է չենք տեսնեեր, կը
խօսինք:

ՏԻՐԱՆ.—[Ժամացոյցը նայելով] Քառորդ մըն
ալ կրնամ նստիլ. Ժամագրութիւն մը ունիմ:
Օննիկ.—Շաբաթ իրիկուն և աստւածաբա-
նական ուսանողէ ժամագրութիւն, բաւական
յարմար չէ՞:
ՎԱՀԵ.—Այս տարի վագանցի չգացիր Տիրան:
ՏԻՐԱՆ.—Հաւանաբար եկող շաբաթ երթամ
Մէջնի կողմէրը:
ԶՈՒԵՆ.—[հառաչելով] Հէյ, հէյ...
Օննիկ.—[Զարենին] Նախանձի հառաչ մըն էր
այդ, Զաւէն:
ԶՈՒԵՆ.—Ծնդհակառակը գիտակցութեան հա-
ռաչը: Իրաւունքս էր ամբողջ տարիի մը քըրտ-
նաթոր աշխատութենէս վերջ վագանց մը ունե-
նալ, բայց ա՛լ վազ անցանք վագանցէն՝ գոնէ
գործ մը ըլլար:
ՎԱՀԵ.—[Տիրանին աչք ընելով] Վաղը կիրակի
է, տղա՞ք, եկեղեցի չերթա՞նք:
Օննիկ.—Երթա՞նք, աղորիկ բաներ կուգան:
ՏԻՐԱՆ.—Եթէ ես րսէի գուցէ ոխալ թարգ-
մանուէր, բայց իրազութիւն է թէ՛ կարելի է լաւ
ծանօթներ ունենուլ և օգտուիլ անոնցմէ:
ՎԱՀԵ.—Ի՞նչ կ'ըսես, Զաւէն, վաղը սանկ
մէկ խօսք ըրած չերթա՞նք:
ԶՈՒԵՆ.—[Հեղանենիով] Ծնորհակալ եմ:
ՎԱՀԵ.—Ի՞նչ կը կորսնցնենք, Ծնդհակառակը
կարելի է բան մը շահիլ:
ԶՈՒԵՆ.—Եկեղեցիէն եկած շահէն բացարձա-
կապէս չնորհակալ եմ:
ՎԱՀԵ.—Հասկցանք, բայց բան մը կը կոր-
սնցնմէնք:
ԶՈՒԵՆ.—Այս որ այդ կեղծիքի տուները քա-
ջալերած կ'ըլլանք:

ՎԱՀԵ. — Առանց մեզի ալ անոնք աւելիովը քաջալերւած են արդէն:

ԶԱՒԻՆ. — Գոնէ ես ինձ համար այն միխթաւ բանքն ունիմ թէ՝ ես չեմ քաջալերեր. փոխանակ երթալ և ստարացնելու ուխարներու այդ հօտը, աւելի լու է գիրք մը կարդալ:

ՏԻՐԱՆ. — Իբր ընկերաբան քեզի հարցնեմ թէ՝ Զաւէն, կը՝ կարծի՞ս որ այս ժողովուրդը առանց եկեղեցիի կրնայ ըլլալ:

ԶԱՒԻՆ. — Զէ՛ թէ կը կարծեմ, այլ կը հաւատամ, և կր հաւստամ տակաւին որ այս ժողովուրդին տգիտութիւնը զարերով պիտի յաւերժանայ այդ շէնքերուն միջոցով։ Այդ շէնքերը տգիտութեան դարբնարաններն են և իբր նախատինքներ կը կանգնին գիտութեան դէմ։ Ի՞նչ կը սպասէք այդ եկեղեցիներէն, այդ հոկայ ու մեծածախս շէնքերուն տեղ թող համալսարաններ կանգնէին։

ՏԻՐԱՆ. — Համալսարաններն իրենց տեղն ունին՝ եկեղեցիները իրենց տեղը և ո՞վ ըստու որ Ամերիկայի մէջ համալսարաններ կը պակսին։

ԶԱՒԻՆ. — Այո՛, չեն պակսիր անոնց համար որ գրամ ունին։ Իսկ չունեցողներուն համար կը պակսին։ Ինչո՞ւ ես այսչափ կը տառապիմ՝ եթէ իսկապէս ժողովուրդին համար են անոնք, ինչո՞ւ դուն աստւածաբանութեան կը հետեւիս. կրնա՞ս զիս հաւատացնել թէ քու մաքուր հաւատքդ անստոյգին համար այնքան ստոյգ էր որ քեզ անոր պաշտօնեայ ընելու մղեց։ Մինք իբար լու կը ճանչնանք չէ՞ Տիրան։ Խմորի, խառնըւածքի ինդիր է ընել կամ չընելը։

ՏԻՐԱՆ. — Բայց ընդունէ, Զաւէն, որ դուն չատ անիրաւ ես՝ եկեղեցիին դէմ քու ունեցած

մտածումներու մէջ։

ԶԱՒԻՆ. — Անիրաւութեան ոչինչ կայ. եթէ լսածներու սխալ են, ճշգէ՛ և ես ալ քեզի հետ եմ։ Բայէ՛ խնդրեմ, գուն իբր զարգացած երիտասարդ և աստւածաբանութեան ուսանող, ըստէ՛, ի՞նչ առնչութիւն կայ սա քու եկեղեցիիդ և գիտութեան մէջ, գիտական ի՞նչ հիմքի վրայ կանգնած՞է սա եկեղեցիդ։ Եթէ ես կեանքիս մէջ կ'արգահատիմ տգէտ ժողովուրդին վրայ, որ կուրօրէն կը հետեւի, կը գատապարտեմ քեզի պէս երիտասարդները որ գիտնալով անստուգութիւնը, խեղճ ժողովուրդը ոչիս սրօրէն կը քաշէք գէպի տգիտութեան խաւարը. և ասիկա մինակ հացի համար։ Կը նախընտրիմ լեռնական աւաւազակ մը ըլլալ հացիս համար՝ քան քահանայ, գոնէ ան անկեղծ քաջութիւնն ունի։

01ՆՆԿ. — [լիբնիջոյվ] Է՛Յ, քե՞զ մտիկ պիտի ընկենք. ա՛լ բան չկա՞յ, միշտ նոյն կրկնուած րաները.

ՏԻՐԱՆ. — Է՛ա՛ւ, փակենք, կարելի չէ իրարու հետ համաձայնիլ։ Հաւատքդ քեզի պահէ Զաւէն, իմ հաւատքս ալ ինձ կը պահեմ։

ԶԱՒԻՆ. — Կը պահէս գուն քեզի Տիրան, համաձայն եմ քեզի հետ, թաղ ամէն ժարդ իր հաւատքն ունենաւ, սաւց իրաղութեան մէջ հակառակն է, զուք կւերականներդ հաւատքնիդ ձեզի չէք պահեր, կառուցեր էք եկեղեցիներ, պատնէշւէր էք ժողովուրդին տգիտութիւնով. և չէ թէ գուք ձեզի չէք պահեր, այլ իբր աստւածամիջնորդներ՝ կ'արգիլէք ալ ձեզի հակառակ խօսպները։

ՏԻՐԱՆ. — Բեզ ո՛չ մէկը կ'արգիլէ խօսելէ կամ պոռալէ։

ԶԱՒԻԵՆ.—Խօսքով այս՝ բայց գործով ո՞չ։ ԶԵ
ԿԹԷ զիս ազատ կը թողուք խօսելու, այլ եթէ
տեսնէք որ՝ կրնամ խօսիլ՝ ձեր «ազատ» օրէնքով
կ'արդիլէք։ Խօսելու ազատութիւնը մինակ սուտն-
ու կեղծիքը պաշտպանողներուն արւած է։ «Ե-
կեղեցի չգալու ազատ ես» կ'ըսէք, բայց մինիս-
րըրի յանձնարարականով գործ տալ պայմանա-
ւորւած էք ձեր պարզամիտ պաշտօնակիցներուն
հետ, և տակաւին ոչ մէկը կ'արգիլէ զիս խօսե-
լէ նոյնիսկ պոռալէ, ՀԷ... Եթէ, Տիրա՛ն, խկա-
պէս ամենապղտիկ հաւատքով մը կ'ըսիս այդ
խօսքերդ, թոյլ տուր որ ըսնմ թէ «սուրբ հո-
գին» քու հոգիդ ալ թունաւորեր է՝ ինչպէս բո-
լոր քեզիպէններուն հոգին։ Կը կրկնեմ որ այդ
շրջապատը, այդ մթնոլորտը մարդերու որբու-
թիւնը կը պղձէ։

ՕՆՆԻԿ.—Օ՛ֆ�Փ... վազ անցէք... է՛, Զա-
ւէ՛ն, բերանդ սկսաւ աղէկ բացւիլ, յոզնութիւնդ
անցաւ, չէ՛, ել նայինք։

ՎԱՀԵ.—Այս՝ քիչ մը դուրս ելնենք։

ԶԱՒԻԵՆ.—Դուք գացէք, տղա՛ք, նո այստեղ
աւելի հանդիսաւ եմ։

[Օննիկ կը քաշէ կը կանգնեցնէ Զաւենը]

ՏԻՐԱՆ.—[կանգնով զիխարկը զլուխը կը զնէ] է՛,
տղաք, կուտ-պայ։ [կը մեկնի] ԲՈԼՐԱԲ.—կուտ-պայ։

ԶԱՒԻԵՆ.—Տիրա՛ն, անշուշտ չնեղացար։

ՏԻՐԱՆ.—[դուրսէն] ԶԷ՛, չէ՛, անհոգ եղիր։

ՕՆՆԻԿ.—[Զաւենին զիխարկը զլուխը դրած կը
քաշէն] ՏԷ՛, կարծես մնաած ես։ Շարժէ նայինք։

ՎԱՀԵ.—Այս՝ որքան փոփոխութիւն։

ԶԱՒԻԵՆ.—Կը թունաւորեն, վահէ՛, կը թու-
նաւորեն։

[Օննիկ սուլելով՝ դուրս կ'ելնեն իրարու ենեւէ]

ՏԵՍԻԼ Գ.

[Հմայեակ Աերս կը մտնի իր սենեակը]
ՀՄԱՅԵԱԿ [առանձին]

[ՄՏԱԾԼՈՆ կը բայի վայրկեան մը] Բայց ան-
կարելի է միտքէս վանել։ կը սիրեմ զինքը, կը
սիրեմ ու սէրէս տարւած՝ պիտի ընեմ ինչ որ
կարելի է։ [ՊՈՒՆ] Ո՞րքան տարօրինակ հն սա-
ամերիկացի աղջիկները, ո՞րքան քմահամ... Դը-
րամի համար վայրկեան մը ամէն ստորնութիւն
կ'ընեն և ահա յաջորդ վայրկեանին տարօրինակ
քմահամոյքով մը կը կունկրտեն, կ'անցնին նոյն
դրամին վրայէն։ Ելէնո, Եթէ անգամ մը քեզի
տիրանամ, արդէն նպատակիս հասած պիտի ըլ-
լամ։ կը սիրեմ քեզ, կը սիրեմ՝ ինչ տեսակ աղ-
ջիկ ալ եղած ըլլաս։ [ՄՏԱԾԼՈՆ] Բայց ո՞չ, պէտք
էկեղծել, պէտք է այնպէս ցուցնել ասկէ վերջ
թէ՛ չեմ հետաքրքրւիր իրմավ, որովհետեւ կնո-
ջական հոգերանութիւնն է՛ հպարտ ու քմահամ
ըլլալ զինքը սիրողին հանդէպ։ [ՊՈՒՆ] Ի՞նչպէս
սակայն կարելի է Զաւէնը մէջտեղէն վերցնել,
ան է իմ մեծագոյն արգելքս, որովհետեւ Ելէնօն
ամբողջ սիրողվը կը սիրէ զայն։ [ՄՏԱԾԼՈՆ] Աւ-
րիշ ոչինչ կրնայ ըլլալ, կամ Զաւէնը հեռացը-
նել, կամ Ելէնօին սիրող սիրտը թունաւորել։
[ՎԻՆՈՎԱԿԱՆ] Այս՝ և ես տափկա ընելու համար ոչ
մէկ միջոց պիտի խնայեմ, որովհետեւ կը սի-
րեմ։ [կը նսի ու կը մտածէ] [դուռը կը զարնի] Եէս։
[Քեյտի, անտիրուիին, քառասուն տարեկան
կին մը ներս կը մտնէ]։

ՏԵՍԻԼ Գ.

ՀՄԱՅԵԱԿ ԵՒ ՔԵՑՑԻ

ՔԵՑՑԻ.—[ձեռքը նամակ մը բոնած ուրախ
դէմոնով] Հըլօ Հմայեակ։

ՀՄԱՅԵԱԿ .— Հըլո Քէյտի :
ՔէՅՏԻ .— Վերջապէս գեղեցիկ առիթ մը որ
լւա կրնայ վերջանալ :
ՀՄԱՅԵԱԿ .— [հետաքրի] Ի՞նչ , նորամիջոց մը
դտար :

ՔէՅՏԻ .— [նամակը ցուցնելով] Տեսա՞ր՝ այս
նամակը , քու յաջողութիւնդ ասոր մէջն է :

ՀՄԱՅԵԱԿ .— [աւելի հետաքրի] Ի՞նչ նամակ
է , տեսնեմ : [կ'ուզէ առնել , Քէյտին չար] Նըս-
տէ՛ , ըսէ տեսնենք , ի՞նչ հնարք գտած է վար-
պետ միտքդ :

ՔէՅՏԻ .— [նստելով] Անանկ դիւրին-դիւրին
նամակ չեմ տար . փոխարէն՝ ի՞նչ պիտի տաս :

ՀՄԱՅԵԱԿ .— Գիտես որ ամէն բան կուտամ ,
ալ ի՞նչ սիրտ կը հատցնես :

ՔէՅՏԻ .— Հիմա մաիկ ըրէ : Զաւէնը ուրիշ
աղջիկ մը ունի որ զինքը կը սիրէ : Հարուստի
աղջիկ ըլլալու է , քանի անգամներ օթօմոպիլով
եկած զինքը փնտառձ է , բայց չէ գտած , ան-
ցածները իր քարդը տւառ որպէսդի Զաւէնին
տամ և ըսեմ որ երթայ զինքը տեսնէ , Զաւէն
ուսերը թօթւեց : Ինձ այնպէս կը թւի թէ՝ Զա-
ւէնն ալ կը սիրէ զայն , բայց դրամ չունի որ
աղջիկին հետ երթայ : Եթէ կէնօն չվճարէր իր
սենեսկին դրամը՝ հիմա արդէն շատոնց դուրս
հաներ էի :

ՀՄԱՅ .— Յետո՞յ , պատմէ նայինք , ի՞նչ է ը-
սելիքդ :

ՔէՅՏԻ .— Է , այնքան անհամբեր մի՛ ըլլար :
Այս նամակը այսօր եկաւ , ես կոսհեցի թէ՛ բան
մը կայ մէջը , բացի և կարդացի . սիրային նա-
մակ մը :

ՀՄԱՅ .— [աւելի հետաքրի] Գրաղին անունն
ի՞նչ է :

ՔէՅՏԻ .— [մածելով] Բ՛... Քէթրին կայլնու :
ՀՄԱՅ .— Ի՞նչ , մեր գործատէրին աղջիկը ...
ՔէՅՏԻ .— Իրա՞ւ կ'ըսես , ես գիտեմ որ միշտ
օթօմոպիլով կուգայ :

ՀՄԱՅ .— [ձեռքը կ'ըկարէ] Տուր նայիմ նամա-
կը , ՔէՅՏԻ :

ՔէՅՏԻ .— Նօ՛ , նօ՛ :
ՀՄԱՅ .— Ի՞նչ կ'ելնէ , առւր նայիմ : [ձեռքն
կը յափասակե]

ՔէՅՏԻ .— Ես կը մատածեմ թէ այս նամակը կեր-
պով մը կէնօին տանք : կէնօն նախանձու աղ-
ջիկ է , երբ տեսնէ թէ՛ խարւած է Զաւէնէն ,
յարաբերութիւնը կը խզէ , անկէ վերջ ֆնացածը
կը կարգագրենք :

ՀՄԱՅ .— [որ Քէյտի խօսած ատեն նամակը կը
կարդար , ուրախ ոսքի կ'ելնէ] Հիանալի՛ է , հիա-
նալի ... [կը բայէ] Ի՞նչ ըսիր Քէյտ :

ՔէՅՏԻ .— Այդ նամակը կէնօին տալու է :

ՀՄԱՅ .— Բայց ի՞նչպէս :

ՔէՅՏԻ .— Ես այնպէս կ'ըսեմ թէ՝ նրբանցքը
աւլած ատենս գտայ և կուտամ կէնօին , ան կը
կարգայ և մինք մեր նպատակին կը հասնինք :

ՀՄԱՅ .— [ուրախութենեն ինքզինեն ելած կը
գրկէ Քէյտը] Կեցցե՞ս գուն Քէյտ , խելք ունիս ,
խօսք չուզեր : Ազէկ միտքս եկաւ , ես ալ իմ
կողմէս Զաւէնը կը տեսնեմ ու կէնօի մասին
կարգ մը բաներ կը խօսիմ :

ՔէՅՏԻ .— Ես առանձնապէս ալ կը տեսնեմ կէ-
նօնոն :

ՀՄԱՅ .— [ուրախ] Տուր աս ձեռքդ : [ձեռքը
կը քօթէ ու բղբագրած մը կը գնէ ձեռքին մեջ]
[Քէյտի ոսքի կ'ելնէ] [Հմայեակ ողօգորդելով] Գի-
տեմ , գիտեմ , ձեռքդ զարկած գործին տակէն

կ'ելնեա: կնիկները ճարպիկ են այս տեսակ գործեւ-
րու մէջ, բայց դռւն, թէյտ, է, ալ լմիցուցեր եւ:
[Թէյտ եւ Հմայեակ իրարու ձեռքի բռնած դեսի
դուռը կ'երան]

ՀՄԱՅՏ.—Տուր այդ համակը. [ձեռքին կ'առնեն]

Է, Հմայեակ, կուտ-պայ...

ՀՄԱՅՏ.—[սեմին վրայ] կուտ-պայ, թէյտ,
կուտ-պայ:

ՏԵՍԻԼԻ.

ՀՄԱՅՏԸԿ [առանձին իր սեմեակին մէջ]

[Աւրախ ուրախ բալելով] վերջապէս... Ան-
կարելի է, եղբայր, անկարելի է այդ տեսակ
խնդիրներու մէջ առանց կնիկի գործ տեսնել.
կը փնտահն, կը գտնեն, կը հնարեն, կարծես-
կնիկներու ուղեղը առոր համար ստեղծուած է:
Որի՞ միտքէն կ'անցնէին այս բաները, բայց առա-
թէյտը և արգէն մէջտեղն է: [կը նոսի] Ե՛ ելէ-
նօ, վերջապէս օր մը զիրկիս մէջ, պիտի ունե-
նամ քեզ, վերջապէս օր մը պիտի հաձիս որ հո-
գիս ամբողջ կրակուժը հալեցնեմ քու արհամար-
հու հոգիդ ու գուն բազուկներուս պիտումին
տուի պիտի քուեն ինձ տւած տառապանքներգ: [լուռ] [թօնը փոխելով] Եթէ յաջսղեցայ ծրագրիս
մէջ, եթէ... ի՞նչ հոգս թէ ելէնոն ժամանակին
ի՞նչ անցեալ ունեցեր է, կ'ամուսնանամ իր հետ.
ո՞ր աղջիկը Ամերիկայի մէջ անոր կեանքը չէ
ապրեր գաղտնի կամ յայտնի... [դուրսկն խօ-
սակցութեան ձայն կուզայ] Զաւէնի ձայնն է. [ու-
ժի կ'ելնեն եւ կեափի դուռը կ'առաջանայ] աղէկ-
տունին է, բազգու սկսաւ կարծես, ոէ, Հմայ-
եակ, կարգը քուկի է... [Զաւէն նրբանցքին մէջ
կ'երեւայ ու Հմայեակի սեմեակին դուռին առ-

ջեւեն կ'անցնի] Հըլօ, Զաւէն, հըլօ...

ԶԱՒԷՆ.—[դուրսկն] Հըլօ, Հմայեակ:

ՀՄԱՅՏ.—Եկո՞ւր նստինք քիչ մը:

ԶԱՒԷՆ.—[իր սեմեակին դուռը բանալով բայց
դուրսկն Շատ յոգնած եմ՝ կուզեմ երկնալ ան-
կողնիս վրայ: [կը մտնե սեմեակը]

ՀՄԱՅՏ.—[կեղծ գուրզութանկով] Այս ատեն
պառկիւ կ'ըլլայ... [ինչնիբեն] Յարմար ատենն
է... [բարձր եւ նրբանցքին զեպի Զաւէնին սեմ-
եակին դուռը առաջանալով ներս կը մտնե | ի՞նչ-
պէս ես Զաւէն, շատ ընկեւած կ'երեւիս:

ՏԵՍԻԼԻ. Զ.

ԶԱՒԷՆ եկ ՀՄԱՅՏԸԿ [Զաւէնի սեմեակին մէջ]

ԶԱՒԷՆ.—Շատ յոգնած եմ. ազաքը այստեղ
էին, քաշկատելով դուրս տարին, բայց ստքերուս
վրայ քարելու կարողութիւն չկար: [Զաւէն խօ-
սելու ատեն համերը կը հանե արոտին յենակին կը
կախէ ու կ'երկնալ անկողնին վրայ] Նուէ Հմայ-
եակ:

ՀՄԱՅՏ.—Վախնամ թէ քեզի նեղութիւն տամ,
թերեւո կուզեմ քնանամ:

ԶԱՒԷՆ.—Գիշերները չեմ կրնար քնանալ,
ուր մնաց որ իրիկունէն քնանամ:

ՀՄԱՅՏ.—[արս. մը առնելով] Ե՛, Զաւէն, բան
մը չկրցի՞ր ընել:

ԶԱՒԷՆ.—Ոչ... Հմայեակ, ձեր գործարանին
գործերն ի՞նչպէս են, չէ՞ կարելի այստեղ գործ
մը գտնել:

ՀՄԱՅՏ.—Կարծեմ դուն քիչ մը կը հասկնառ
կօշիկ արգուկելէ, չէ՞:

ԶԱՒԷՆ.—Բիչ մը:

ՀՄԱՅՏ.—Կարծեմ կարելի է բան մը ընել.

երկուշաբթի ժումհենը տեսնեմ...

ԶԱՀԵՆ.—Իրաւ է թէ քիչ մը ծանր է այդ գործը, որովհետեւ կուրծքս կը ցաւի, բայց ի՞նչ ընեմ, պէտք է վերջապէս բան մը ընել՝ ի՞նչ գիւնով որ ալ ըլլայ:

ՀՄԱՅ. — Զաւէն, շխտակն ըսէ, դրամի պէտք չունի՞ս. գիտես, մենք ընկերներ ենք և եթէ մենք նեղ օրերու մէջ իրարու չօգնենք՝ ի՞նչ արժէ մեր ընկերութիւնը:

ԶԱՀԵՆ.—Շնորհակալ եմ, պէտք չունիմ:

ՀՄԱՅ. — Այդպէս չէ, գիտեմ որ պէտք ունիս. անցած օր Քէյտին կ'ըսէր որ սենեակիդ գրամն անգամ էլէնոն կը վճարէ: Լաւ որ տեղն եկաւ և ըսեմ. շխտակը անկեզծօրէն ու ընկերաբը կ'ըսեմ որ ո՛չ այդ պղտիկ օգնութիւնը պէտք է ամերիկացի աղջիկէ մը, ո՛չ ալ իր խօսքերը՝ գործարանին մէջ...

ԶԱՀԵՆ.—[ՏՏԿԱԼՈՎ] ի՞նչ...

ՀՄԱՅ. — Բայց ի՞նչ կարելի է սպասել էլէնոի պէս աղջիկէ մը:

ԶԱՀԵՆ.—[ԱԵՂԱՋԱԾ] ի՞նչ ըսել կ'ուզես, Հըմայեա՛կ:

ՀՄԱՅ. — Ոչի՞նչ... նեղւելու տեղիք չկայ, Զաւէն, մենք այս երկրին մէջ նորեկներ չենք, առանց իմ ըսելուս ալ կրնաս կուահել թէ՝ այդ պղտիկ օգնութիւնները ի՞նչ ծանր փոխարինութիւններով կ'ըլլան: Աղջիկ մը որ տառաւոտէն մինչեւ իրիկուն մէկ գիրիկէն միւսը կը ցաւիկ, շխտակը ես ինձ չեմ ներեր, որ այդ տեսակ աղջիկ մը խօսի թէ՝ Հմայեակը կը հոգամ:

ԶԱՀԵՆ.—[ԲԱՐԿԱՋԱԾ] 0^o, խնդրեմ, Հմայեա՛կ, մի՛ խօսիր այդ մասին:

ՀՄԱՅ. — Լա՛ւ, չեմ խօսիր, իմ նպատակս չէր

խօսիլ այդ մասին, բայց խօսքը տեղը եկաւ և ըսի:

ԶԱՀԵՆ.—Այնքան խոսվէ միտքս որ երբեք չեմ ուզեր ուրիշ նոր բաներով ալ խոսվէի... [Կ'ԵՐԿԱՆԱ] անկողնին վրայ]

ՀՄԱՅ. — [ԻՐԱՋԻՒԹԻՒՆ] Անկարելի է որ օձիքդ ձգեմ... [ԲԱՐՁՐ] Տղալութիւն պիտի ըլլար, Զաւէն, եթէ աղիկի մը համար և ան ալ կ'էնօին պէս աղջիկի մը համար միտքդ խոսվէր: Ի՞նչ կրնաս ակնկալել անկէ՝ որ անցեալին մէջ պոռնը կութիւնով ապրած է. կը հաւատա՞ս թէ ան նոյնը չէ:

ԶԱՀԵՆ.—[ԱՍԵԼՈՎ] Էլօնօն աղջիկ մըն է, Հըմայեա՛կ, որ ես կը հաւատամ թէ չէ՝ այն՝ ի՞նչ որ էր առաջ. և ես պատճառներ ունիմ այգպէս հաւատալու: Եթէ ան ուզէր ապրիլ այնպէս՝ ի՞նչ-պէս ապրած է, ո՛չ մէկ արգելք ունէր, բայց իրականութիւն է թէ՝ ան այսօր կը գործէ և իրը պատւառը գործաւորուի՝ կ'ապրի իր աշխատութիւնով, ասիկա ո՛չ մէկը այնքան լաւ գիտէ՝ որքան ես: Իսկ եթէ, վայրկեան մը, նոյն իսկ ան քու կասկածներդ իրակացնէր, գարձեալ չպիտի մեղադրէի զինքը, եթէ գատապարտելի մէկը կայ՝ ան ալ անբարոյացուցիչ սիստէմն է, որովհետեւ պիտի ապրին, [ԵԵԸ] պիտի ապրին վերջապէս, ապրելու իրաւունքը ոչ մէկը կրնայ խել անոնցմէ: Եւ յետոյ, ես անձնապէս, աւելի կը յարգեմ այն աղջիկները՝ քան անոնք գատապարտող սուտ բարոյագէտները, որովհետեւ երբ այդ կեղծ բարյասէրները կը գատապարտեն՝ միւս կողմէն նոյն բաները կ'ընեն աւելի այլանդակուրէն, մինակ թէ գաղտնի անկիւններու մէջ, վարագոյններու ետին: Ի՛, Հմայեա՛կ, ներկայ ընկերութեան քարոզած բարոյականը գաղտնի ան-

բարոյաւթիւնն է, ուրիշ ոչինչ։ Օրինակ կ'ուզե՞ս։ գործատէրիդ կինը։ Կը կարծե՞ս որ այն խռածին հետ կենակցող կինը տարբերութիւն մը ունի ո և է հանրակինէ։ Այս վերջինը գոնէ ապրաւափ մը անհրաժեշտութեան առջեւ ստիպւած է մարմինը ծախելով ապրիլ, խոկ Տիկ, Լայրնաներ այնքան աստատաձեռնօրէն կը շատրված իրենց մարմինի հեշտանքներուն հետ և դրամը։ Եւ սակացն այդ սիրուն տիկինը բարոյաւթիւն ամէն տիստցոս ունի իր անունին շուրջ, աղնւական, եկեղեցական, ամէն ընկերութիւններու զարդն է, և երբ օթօմոպիլը կանգնի, տանհեակ գլուխներ կը խոնարհնի իր առջեւ։ Այս չէ բարոյականը ներկայ ընկերութեան։

ՀՄԱՅՑ. — Երաւունք ունիս Զաւէն, բայց ուրվհետեւ անոնք զօրաւոր են, հետեւաբար ամէն բան են, բայց ես միեւնոյն տաեն չեմ ներեր կէնսօի պէս աղջիկիներուն։

ԶՈՒՅՆ. — Հմայեա՛կ, մի՛ խօսիր կէնսօի մասմին, որովհետեւ . . .

ՀՄԱՅՑ. — [չարամիտօրէն] լա՛ւ, լա՛ւ, կ'երեւի . . . ԶՈՒՅՆ. — [Ընդհատելով] Աչի՛նչ, ոչի՛նչ . . . Օ՛չ, եթէ կրնայի մէկ անգամէն՝ ամբողջ աշխարհը թունաւորել . . . [կ'երկննայ]

ՀՄԱՅՑ. — [կանգնելով] Ինչ որ է, Զաւէն, քառէ՛ գուրս երթանք, քիչ մը օգ կ'առնենք։

ԶՈՒՅՆ. — Օ՛, նո՛, եթէ կրնայի՝ արդէն տունչէի գտանար։

ՀՄԱՅՑ. — [Չարամիտ բայց կես կատակի տեսող] Թէ . . . ինչ որ է, Զաւէն։ Ես կ'երթամ՝ ուընմն։ [Դեպի դուռը կ'երբայ] կուտապայ։

ԶՈՒՅՆ. — կուտապայ։
[Սենեակին դուռին վրայ Հմայակ եւ կինօ

իրարու կը նանդիպին, առանց իրարու նես խօսելու կանցնին։ Ելեն սեմին վրայ ուրախ դեմք մը տինելով։]

ՏԵՍԻԼ Է.

ԶՈՒՅՆ եւ կէնօ

ԷԼԷՆԾ. — [Ներս մտնելով] Հըթօ Զաւէն։ [Մօտենալով Զաւէնին եւ գուրզութամով] Ի՞նչ ունիս Զաւէն, շատ յոզնած կ'երեւիս։

ԶՈՒՅՆ. — Աչի՛նչ, մինակ շատ յոզնած եմ։
ԷԼԷՆԾ. — [Միւս գուրզութամով] Կ'երեւի այսօր ալ շատ թափուեցար գործի համար։ չհ՞ս գիտեր թէ շարաթի օրերը գործ փնտակէ ըլլար։

ԶՈՒՅՆ. — Ի՞նչ ընէի, վերջապէս յօյսէ մը տարւած պատեցաց և ձեռնունայն վերագարձայ։

ԷԼԷՆԾ. — Հոգգ մի՛ ըներ, Զաւէն, ևս քեզի համար գործ մը գտայ մեր գործարանին մէջ։ Երկուշարթի առաւուն միասին կ'երթանք։

ԶՈՒՅՆ. — [անակնկալ ուրախութիւնով] Իրա՞ւ կ'ըսնի։

ԷԼԷՆԾ. — Քեզ ճանչնալէս մինչեւ հիմա երբեք խարա՞ծ եմ քիզ։ Թէեւ քիչ մը գժւար է գործի, բայց տաենի մը համար կտրելի է քաշ-քըշել։

ԶՈՒՅՆ. — Ի՞նչ գործ է։
ԷԼԷՆԾ. — Կօշիկ արգուկելու և մաքրելու գործ մը կարծիմ արգէն քիչ մը ճանօթութիւն ունի գործէն։ Ես արգէն ֆումկնին պէտք եղածը խօսեր եմ, իբր գործէն լու հասկցող կը մըտնես։ Ամերիկայի մէջ «գիտեմ» լսէ ներս մտիր, անկէ վերջը մեացածը կարելի է կարգադրել։

ԶՈՒՅՆ. — Ճիշդ քիչ մը առաջ Հմայեակէն խնդրեցի որ այդ գործին համար խօսի ֆումկնին։

Էլէնօ .— [Անդացած տեսով] Հմայեակի՞ն . . .

ԶԱՀԻՆ .— Այո՛, ինչո՞ւ այդպէս շեշտով մը :

Էլէնօ .— Ոչչ'նչ : Մինակ աւելի ուրախ պիտք ըլլայի որ անոր խօսած ըլլայիր : Զաւէ՞ն, դուն զիս երկար ատեն է որ կը ճանշնաս տուանց անշուշտ բամբասած ըլլալու, անկեղծօրէն լսեմ որ այդ տղային մէջ ուրիշ մարդ մը կը տեսնուի : Աներբեք բարեկամ չկընար ըլլալ քեզի, ընդհակառակը նենգամիտ թշնամի մըն է :

ԶԱՀԻՆ .— Ի՞նչ կրնայ ընել ինձ, ոչ մէկ ակընկալութիւնով կապւած եմ բրեն հետ, պարզ ծանօթ մը, և այդչափ :

Էլէնօ .— Գիտեմ թէ՝ ան այստեղ գալով զիս բամբասած է, բայց դուն Զաւէ՞ն, զիս շատ լաւ կը ճանշնաս :

ԶԱՀԻՆ .— Անհոգ եղիր, էլէնօ', ուրիներու խօսքերով առաջնորդւելու ժամանակս անցած է :

Էլէնօ .— Գիտե՞ս թէ ի՞նչ պատ սհած է մեր մէջ :

ԶԱՀԻՆ .— Ո՛չ :

Էլէնօ .— Մեր մտերմութեան կատաղի նաշխանձորդ մըն է ան և զգոյշ եղիր անկէ, որովհետեւ ամէն ստորնութիւն կ'ընէ՝ վնասելու համար ինձի, մանաւանդ քեզի : Անցած որ աղւորապտակ մը կերաւ գործարանին մէջ : [Ար խընդապալ] Սրբիան կ'երեւի ալ կողմնակի միջները հատած՝ ուզգակի կերպով ուզեց զիս սովորական աղջիկի մը պէս գործածել, Անուշ լեզուութիւնները, գրամական առաջարկները պարապը եւլան, այն ատեն ուզեց բռնի կերպով զիս համբուրել և ապտակով մը վարձատրեցաւ :

ԶԱՀԻՆ .— [Գրերէ ինթիրեն] կը հասկնամ . . . [մասձկոս] Ֆօրմէնին թող ըսէիր :

Էլէնօ .— Անոր աչքին լոյսն է, գործարանին մէջ ամէն անցուղարձերու լրատուն : Կը կարծէս թէ բան մը բոէր : Եւ յետոյ չե՞ս գիտեր գործարանակոն կեանքը :

ԶԱՀԻՆ .— [մասձկոս] Յետո՞յ . . .

Էլէնօ .— Գոցենք . չարժէ այդ ինկանին մտախն խօսիլ :

ԶԱՀԻՆ .— [Տիսուր] Ինչո՞ւ մարդեր այսքա՞ն ստորին կ'ըլլան . . .

Էլէնօ .— [Խօսելով] Զաւէնի նով եւ զրկելով Զաւէնի վիզը] Բոէ՛, Զաւէ՞նս, անշուշտ շես նեղանար քեզ այսպէս կոչելուս համար — ինչո՞ւ այսքան ախուր ես : Ուրախ եղիր քիչ մը, այլ եւս գործ ունեցար, ասկէ վերջ ամէն տուտութեւթեւի գործարան պիտի երթանք ու թեւթեւի վերագառնանք, անանկ չէ :

ԶԱՀԻՆ .— [Մերենաբար] Այո՛ . . .

Էլէնօ .— [Գուրզուրանեով] Եւ Զաւէնի երեսը տոյելով] ինձի նայէ՛, [Երեսը իր կողմբ կը դարձնէ] անջղ մը կը ցաւի, ինչո՞ւ չես խօսիր :

ԶԱՀԻՆ .— Ո՛չ մէկ անդ կը ցաւի, էլէնօ' . . .

Էլէնօ .— «Էլէնօ» կոչ զիս, Զաւէն :

ԶԱՀԻՆ .— Կը մտածեմ թէ՝ ինչո՞ւ բարի կարծըւած մարդերը այսքան չար են, իսկ չարերը այնքան բարի . . . Ի՞նչ բան էլէնօ, ի՞նչ բան կրնայ քեզ այսչափ բարի ընել ինձ հանդէպ :

Էլէնօ .— Ի՞նչ . . . այն որ դուն իմ փրկիս եղած ես, զիս գուրա հանած ես այն տիղմէն, որի մէջ թաղւած էի ու համեստ՝ բայց միշտ պատւուր գործաւորուհիի գիրքին հասցուցեր ես, և . . . [լուռ]:

ԶԱՀԻՆ .— Շարունակէ՛, էլէնօ', շարունակէ՛, ինձ անյքան քաղցը է խօսիլ անցեալէն, անոնք

շատ քաղցր եղան են՝ թէեւ տառապալի, և իմ
տիտուր վայրկեաններուս մէջ անոնք իմ մշտա-
կայ ընկերներս են . . . բայց մի՛ շողոքորդել զիս :

ԷԼԷՆԾՈ. — [օվկելով Զաւեկի եւեսը եւ ժպիտով
մը] Զգէ ատոնք, անցածը անցած է, նկրկան
նայինք: [ուրախ շետով] Կ'երեւակայիմ թէ՝ ին-
չը պիտի խօսին մեր մասին, երբ այնպէս մը-
տերիմ զոյգի մը պէս ամէն օր իրարու կողքին
երեւանք: Առ ձեր հայերը շատ բամբասոզ և
նախանձող են:

ԶԱՒԵԿՆ. — Է, ի՞նչ կ'ուզեն այն թող խօսին.
եթէ նոր բան մնացեր է խօսելու՝ թող խօսին.
շատ շատ քանի մը ամիս, անկէ վերջը ան աւ
կը մոռցւի. չես գիտեր ժողովուրդ ըսածդ. մի-
նակ հայերը չեն, այլ աշխարհի բոլոր ժողովուրդ-
ներն աւ գրեթէ նոյն ամբոխային հոգեբանու-
թիւնը կը ներկայացնեն՝ զգտիկ տարրերութիւն-
ներով: [կելնե կը սկսի բալել]

ԷԼԷՆԾՈ. — Յոգնած եմ կ'ըսէիր և ելար կը քա-
լիս. չնարիս . . .

ԶԱՒԵԿՆ. — [ժպիտով մը էլենօին նայերով] կը
նստիմ քիչ մր վերջ: Կ'երեւի . . .

ԷԼԷՆԾՈ. — [ընդիատելով] կտրէ . . . չե՞ս զարմա-
նար անշուշտ:

ԶԱՒԵԿՆ. — Զիմ զարմանար, բայց կը վախնամ:

ԷԼԷՆԾՈ. — [լանկարծակիի եկած] Ի՞նչ, [ի՞նչ]
կը վախնաս. չէ՛ Զաւէնս, չէ՛, մի՛ վախնար ինէ,
որպէսիսեւ ես չար աղջիկ մը չեմ, եթէ անցեա-
լին մէջ ստիպւած եմ չարութիւն ընել՝ ատոր
մէկքը իմ չէ: իսկ հիմտ սիրտ մը ունիմ՝ որ
ամբողջ սէրով լեցւած է . . .

ԶԱՒԵԿՆ. — Սէրով լեցուն սիրտերու հետ շատ
տեսնած եմ, բայց անոնք խօսքէն գործի չեն

կրցած անցնիլ: Սէրի ու յուսախարութեան եր-
կար շղթայ մը կը կազմէ կեանքս, դուն գիտես
արդէն, և ատոր համար իսկ կը վախնամ:

ԷԼԷՆԾՈ. — Իսկ ևս պիտի ապացուցանեմ սէրի
և այդ պատկռումի մարմնացումը . . . [տեղ տինե-
լով նովը եւ ձեռքով նիշդ նովիկը զուցնելով] ե-
կուր, Զաւէն, նստէ սանկ ձիշգ քովիկո, ե-
կուր . . . [Զաւեկն կը նայի, էլեն նորեն կը գրիէ
անոր վիզը եւ մեկ ձեռքով կը բունե Զաւեկն ձեռ-
քը] Գիտեմ թէ շատ խարւած ես, բայց օր մը կը
վարձատրւիս . . . [Զաւեկն ձեռքը իր կուրծքին սա-
հելով] Բաէ՛ Զաւէն, ըսէ՛ թէ ի՞նչ կը բարախէ
այս կուրծքը:

ԶԱՒԵԿՆ. — . . . [կը հառաչէ]:

ԷԼԷՆԾՈ. — [գրկելով Զաւեկնը] Բաէ՛ թէ՝ ևս կը
սիրեմ քեզ . . .

ԶԱՒԵԿՆ. — Էլէնօ՛, դուն գիտես թէ կը սիրեմ
քեզ, և այդ սէրս էր որ պատճառ եղաւ քառ
այս կեանքիդ, թէեւ զրկւած՝ բայց պատւաւր:

ԷԼԷՆԾՈ. — Երբեք չեմ տարակուսիր այդ սէ-
րիդ վրայ, Զաւէնս, բայց այդ խօսքը քու շըր-
թունքներուդ վրայ որքան շատ կրկնւի; նոյն-
քան անուշ կը հնչէ ինձ. լսէ՛, կրկնէ՛, «կը
սիրեմ քեզ»:

ԶԱՒԵԿՆ. — Բայց . . .

ԷԼԷՆԾՈ. — Կը հասկնամ՝ քեզ, կը հասկնամ՝ քու
ներքին ձնշումդ, ամերիկունին գրամապաշտ է,
բայց ան կրնայ սիրել և շատ խորունկ կը սիրէ՛
երբ անգամ մը սիրէ՛: Զաւէնս, թոյլ տուր որ
այսօր քեզ համբուրեմ բոլորովին ուրիշ, բոլո-
րովին նոր սէրով մը [կը համբուրէ] և թոյլ տուր
որ ապացուցանեմ իմ սէրխս բովանդակ սաստ-
կութիւնը:

ԶԱԼԵՔՆ.—Սահանց սէրի չեմ հաւատար երջան-
կութեան, սիրտիս մէջ պարապ մը կալ, որի լի-
ութեան ես երբեք չեմ կրնար հաւատալ:

ԷԼԷՆԾՈ.—[Տխուր] Սրդեօք խարւած եմ իմ
մտածումներուս մէջ, Զաւէն, արդեօք կայ մէկը
որի կապւած է սիրտի ու իս... [Պուռ]:

ԶԱԼԵՔՆ.—Մի տխրիր, Էլէնօ', [կը ույիք] չկայ
մէկը՝ որ կը սիրեմ այսօր, անոր համար մինակ՝
որ իմ ըմբռնած սէրի կատարելութիւնը չեմ
կարծեր գտնել առ ընկերութեան մէջ:

ԷԼԷՆԾՈ.—Խօսէ՛ ինձ, Զաւէն, խօսէ՛ անկեղ-
ծօրէն [լուզլած] Զունի՞ս ուրիշ ու ե նկատում,
ու ե մտածում, ըսէ՛ ինդրեմ, զիս սիրիլուդ
մէջ քեզ արգիլոզ չունի՞ս ու ե է հասարակական-
մտածում, ըսէ՛ ինձ, որովհետեւ կը սիրեմ քեզ,
ու՝ ես քու ազատագրեալդ ու երկար ատեն քու
մտերիմ աշակերտդ՝ պիտի ըսկմ որ ես պիտի
ըլլամ քու ընկերդ ու հաւատացած սէրիդ մարմ-
հաւարումը. խօսէ՛, Զաւէն:

ԶԱԼԵՔՆ.—Էլէնօ', քու տարակոյսդ իմ մտա-
ծումներուս մասին վիրաւորանք մըն է ինձ: Է-
սել կ'ուզես ազգւիլ, արգիլուիլ ընկերութեան-
մտածումներուն առջեւ. գուն գիտնալու էիր
թէ՛ ես կ'ատեմ այս ընկերութիւնը, կ'ատեմ ա-
նոր մտածումները, անոր սըբաւթիւններն ու
աստւածները: Ո՛չ մէկ սէր, ո՛չ մէկ մտածում
կապած է զիս այսօր, ես իմ մէջ աստւած մը կը
զգամ և կը պաշտեմ այդ աստւածը, կը սիրեմ
բոլոր մարդերը այդպէս տեսնել ու կը տանջւիմ
անոնց սարկութեան պատկերին առջեւ: Իմ աստ-
ւածային ազատութեանս կատարելութիւնը իմ
մեծագոյն տառապանքս է այս զլթայւած ընկե-
րութեան մէջ: Ու եթէ չեմ հաւատար մարմին-

մալ մտածումներուս, որովհետեւ չհանգպեցայ
մէկին որ երջանկութիւնս լիացնէր ինձի հետ
բաժնելով իմ ազատութեան գաղափարս:


ԷԼԷՆԾՈ.—[համբուրելով եւ սրապնդիչ շեշ-
տով] Մոսցի՛ր ուրիմն ամէն բան, ցած անկիւնի
մը մէջ բուսած՝ ես ծաղկիլ պիտի ըլլամ քու
սէրիդ: Ես ազատագրեալդ եմ, քու մտածումնե-
րուդ մարմնացումը պիտի ըլլամ, քու աշակերտդ
եղայ՝ քու ընկերդ պիտի ըլլամ. հայրուրէ՛ զիս
Զաւէնս, քուկդ եմ յաւիտեան...

ԶԱԼԵՔՆ.—[համբուրելով գրովագին] Սիրէ՛
զիս Էլէնօ', սիրէ՛ զիս, որովհետեւ սէրն է մի-
նակ երջանկութիւնը, սէրը ազատ, անկաշկանդ
ու աստւածային, սիրէ՛ զիս, որովհետեւ ամն-
դէեան սիրաս սիրող մը կը փնտոէ որ սիրել
գիտնայ, ինչպէս ինք կը հաւատայ սէրն ու կը
սիրէ: Ես երբեք չէի մտածեր թէ պիտի մար-
մին առնէր գաղափարս, ու մինակ գալիք սե-
րունդներու մարմնաւորող մտապատկերներով կը
հրձէի: Աշխարհի մէջ մեծ է այն մարդք՝ որ
ինքն իսկ իր կեանքովը կ'ապրի իր մտածումը:
Ես կ'ատեմ եկեղեցիներն ու անոնց սպասաւոր-
ները, ես իմ սէրիս սըբապղծումը կը տես-
նեմ անոնց օրհնէնքին մէջ. [կը համբուրէ] Կը
սիրեմ քեզ, Էլէնօ՛ս, և թող այս խօսքս աշ-
խարհի բոլոր կրօնաւորներուն օրհնենքիներէն
աւելի վեր ըլլայ ու վսեմ. [կը համբուրէ կր-
կին] Կը սիրեմ քեզ Էլէնօ՛ս, ու իմ սէրս ամէն
օրէնքներէ, ամէն հրամաններէ ազատ ու ան-
կաշկանդ ըլլայ: Կը սիրեմ քեզ առանց միջնոր-
դի, առանց կեղծ օրհնութեան, առանց օրէնքի
ու այնտեղ է իմ աստւածութիւնս. սիրէ զիս՝
եթէ կրնաս աստւած մը սիրել...

ԵԼԵՆՈ .—[ՏԵԽԴԱԳԻԲ ԽԱԹՔՈՒԵԼՈՒ] ՔԱՆԿԴ եմ,
ԶԱԿԵՆՆ, թող այս Համբողրս ուխտը ըլլայ իմ
սէրիս ու խոստումիս : Եկուր, երթանք միասին
գուրս, ամայութեան մէկ խորքին մէջ, ընկե-
րութեան կապանքներէն հեռու՝ մեր հաւատա-
ցած սէրին ազատ նեկտարը խմնլու : [կը կանգ-
նին]

ԶԱԿԻՆ .— Սյորի քու մէկ Համբողրդ, ելէ-
նո՞ս, անցեալի ոուտ սէրերու սիրտիս մէջ թո-
ղուցած պարապլ լեցուց . . . Սէրը իմ հոււաթքու,
իմ կրօնս ու իմ ասոււածութիւնս է . և ես այս
օր անոր լիութիւնն ունիմ . . . երթանք, դուն,
իմ սէրս ու ընկերս : Համբոյր մըն ալ և ան թող
կեղծիքի կրօնքներու ու սուտի օրէնքներու բո-
լոր գաճաճութիւններէն վեր՝ մեր ուխտի, մեր
ամուսնութեան անեղծ պասին ըլլայ : [ԵՐՊՈՒՇ
ԵՐՊՈՒՆԻ կը մնան իրաւ գրկած]:

Վարագոյր կ'իջնէ



Ա Ր Ա Ր Ի Ա Մ Ք.

Ենքը կը ներկայացնէ կօշիկի զործարան մը.
ձախ կողմը շարւած կօշիկ մաքրելու եւ արդուկե-
լու մեթենաներ . մեթենաներուն վրայի կազմը կազի
յատուկ վառարան մը՝ երկիր արդուկները վրան
դրւած . մեթենային խուակուսի տախտակին վրայ կօ-
շիկի կազակարներ, մաքրող ջուրերու, առանձին ա-
ռանձին ամանեներ, բիբեզէ պատիկ ամանին մը մէջ
վկային, կոսակի կառարներ, աչ կողմը եւ նակար շար-
ւած են կօշկադարակներ՝ (reck) կօշիկներով լիցուն.
բեմին առասապի կողմը կօշիկի խաւախարդէ տու-
փեր . կօշկադարակներու ետեւը՝ աշ կողմը զիսարաց
աղջիկներ՝ զործարանի զավացներով նոտած արութ
մէ վրայ, ձեռքերնին կօշիկներ՝ արւած մասերը շի-
նելու գրազած . երբեմն իրարու հետ կը խօսին, ու-
րիշներ ոչ ձիր կը ծամնն: Վարագոյրը բացուելուն՝
մեթենաներուն առջեւ զործարաններ արագ արագ
կ'աշխատին, ուրիշներ կ'անցուդարձին: Զատեն ա-
ռաջին մեթենային առջեւ կ'աշխատին սեւ շապիկ մը
հազար:

Տ Ե Ս Ա Լ Ա .

ՄԱՐՑԻՐՈՒ .—[պոռապոլ] ԶԱԿԵՆ, ԺՈՒԾ քա-
նի է :

ԶԱԿԻՆ .—[աչքը մեթենային վրայ դրւած զր-
պանի ժամացոյցին դարձնելով եւ միեւնոյն ատեն
արագ արագ կօշիկ մը մաքրելով] Տառը րոպէ կայ-
տառներկու քին:

ՄԱՐՑԻՐՈՒ .— Վայ խերն անիծած, չկրցայ
ձեռքիս միյսը լմեցնել: [արագ արագ կ'աշխատի]:

[Ենթին խորեն ու մէջտեղէն կօշկադարակնե-
րու ենթեներէն բացւելու զացոյ զործարաններ
անձեռոց մը ձեռքերնին՝ կ'անցուդարձին, մէջ-

տեղի աժխատաւոր տասնեւելինգ տարեկան նիմար տղեկ մը կօշկադարակները կը քէ, կը տանի կը բերէ:

Ճ0ՐՃ. — [զործը ձգելով] Հերիք է աշխատիք աղաք, հերիք է, Լայրնաը մ՞նք պիտի հարցատացնենք, ան չառ հարուստ է արդէն: [անձեռոցը առած կ'երայ]

ՍիՄԻ. — Բարեկամդ [Յօրմէնն ակնարկելով՝ որ բեմին խորհն կօշիկները նայերով, վերեն վար երկայն մոխագոյն վերարկու մը հագած, ականջին մատիս մը՝ կ'երեւի]:

Ճ0ՐՃ. — [բալելով կօշկադարակներու մէջերէն] ի՞նչ հրէայի վախկոտութիւնդ նորէն ձեռք առիր, խերն անիծեմ վօրմէնին ալ պօսին ալ, աստւածս չէ ես, հոգիս ի՞նք աւաւ: [Դարակներու եփին կ'անեւեւուրանայ] [աղջիկներն ալ՝ որ խօսելով երջալով զործերին կը ձգեն, հսկիչը տեսնելով՝ լուռ, զուխները կախ բուրջերու հետ կը խաղան՝ ինքիննին զբաղւած ցուցնելու համար]:

ՈՒԻԼՍԸՆ. — [կօշիկները նայելու զբաղւած] Աղջիկներ, տակաւին տասը բոպէ կայ, աշխատեցէք:

[Աղջիկները խոժոռ կերպով կը նային անոր կողմը, մէկ մասը կը նայի, միւսը՝ բուրջերու հետ կը խաղայ]:

ԳՈՐԾԱՒՈՐՈՒՀԻՀԻ. — [Կամաց մը էլենօփին՝ որ կանգնած է] Կրողը տանիք քեզ շո՞ն:

ԷԼԷՆ0. — [Անձեռոցը ձեռքը] ի՞նչ կը վախնաք, ամէն գործաւոր տասը բոպէ առաջ գործը ձգելու իրաւունք ունի լւացւելու համար, ի՞նքնիբան օրէ՞նք կը հանէ: [կը բայէ կօշկադարակներուն մէջէն]:

ՈՒԻԼՍԸՆ. — [այն կողմ նայելով] Զիմացա՞ք, ո՞ւր...

ԷԼԷՆ0. — Գործ գլուխ գործողներու իրաւունք չունիք խառնւելու: [կ'անյայտանայ]

ԶԱՒԻՆ. — [ձեռքի գործը ձգելով դէպի այն կողմ կը նայի եւ տեսնելով հսկիչը որ իր զործերը կը նայի] Շատ աղտոտ կուգան գործերը, պարոն Ռւփլուըն:

ՈՒԻԼՍԸՆ. — [առանց զուխը վերցնելու մաքրւած կօշիկ մը կը ցուցնէ Զաւենին մատնացոյց ընելով պակաս մը]

ԶԱՒԻՆ. — [կօշիկին նայելով] Ատիկա աղու չէ այլ քերթւածք:

ՈՒԻԼՍԸՆ. — [ուրիշ կօշիկ մը ցուցնելով] Ամէն ատեն ինձի գիտողութիւն կուգայ քու գործերուդ մասին, աս չկրնար ըլլաւ, լաւ գործ պէտք է հանէք, կը հասկնա՞ս. կամ լաւ գործ կամ տուն, ուրիշ բան չեմ հասկնար:

ԶԱՒԻՆ. — Բայց քերթւածներուն ալ պատասխանատու չեմ ես, նայեցէք, բոլոր կօշիկներն ալ քերթւած են և մանաւանդ շատ աղտոտ. առաւատէն մինչեւ կէսօր այս ժիշուը չեմ կըցեր լմացնել:

ՈՒԻԼՍԸՆ. — Կարելիին չափ լաւ ընելու է, ուրիշ բան չեմ գիտեր: [կը սկսի բայիլ ու դարակներուն եփին անհետանայ]:

ԶԱՒԻՆ. — [բարկացած անձեռոցը առնելով] Հազիւ ապրելու չափ գրամ շինելու առիթ կուտան՝ առաւատէն մինչեւ իրիկուն քրտինքներու մէջ լողալու չափ աշխատելով, ան ալ հազար ու մէկ գիտողութիւններով. ասիկա տարւելիք բան չէ. գոնէ քերթւածքն ու աղտօ իրարմէ զանազանող մը ըլլայ ապուշը. կեցիր, ասիկա կար-

ծեմ վերջինը կ'ըլլայ. քու այդ բռնութեանդ. կէս-
սօրէն վերջ կը տեսնւինք: [քալել կը սկսի. կը
հանդպի ծօրնին որ լացւելի եւ կը դառնայ] ե-
րէկ իրիկուն ի՞նչ որոշում անցաւ ժողովին մէջ,
ծօրձ:

ՃՈՐՃ.—Այսօր պէտք է պահանջ ներկայացը-
նել, գործաւորական միութիւնը (union) ճեռքը
ուրիշ գործադուլ չունի և արդէն բացի երկու
գործաւորներէ՝ միւսները բոլորն ալ ադամակ-
ցեցան:

ԶԱԽԻՆ.—Լա՛ւ, քիչ մը վերջը կը խօսինք:
[կը քալէ դարակներու ետեւեն եւ կ'անհետանայ]

[Բոլոր գործաւորները կ'անցցուդարձին, շատեր
լարենին հազած՝ դուրս ելելու նամբային վրայ, ուրիշներ լացւելի կը վերադառնան, ասդին ան-
դին իրարու հետ կը խօսակցին, խորեն աղջիկնե-
րու քրիչներ, հատ ու կտոր նիշեր ու խօսիեր: Կէ-
սօրի փողը կը սուլէ, մեխենաներու խուսոցը կը
դադրի, կօսկի մաքրոյ գործաւորները բոլորը կը
վերադառնան եւ իրենց կեսօրի նաւերուն ծրարը
կը քալեն, ուրիշներ արդէն նսած կ'ուտեն, Զա-
ւեն եւ կէնո ծրարը քալած, իրարու դէմ նսած՝
կը սկսին ուտել]:

ՃՈՐՃ.—[Մարտիրոսին] Մինչեւ հիմայ ի՞նչ չի-
նեցիր:

ՄԱՐ.—[ուտելով] Սուս եղիր, հիմա այս տե-
սակ գործարանին ալ կը սկսիմ գործին ալ. ա-
ռաւօտէն մինչեւ իրիկուն շան պէս քրտինք թա-
փէ՝ շինածդ շատ շատ տօլար ու կէս. աս բոլո-
րին վրայ ալ պղտիկ պակասի մը համար շանձա-
գին բերնին հոտը մտիկ ըրէ. աս գործերը տա-
գինով, նո՛, ասիկա քաշւելիք բան չէ:

ՍԵՄԻ.—Դիտազութիւն ընողը գոնէ գործէն

հասկցող ըլլար: Աշտոն ու քերթւածքը տակաւին
իրարմէ չկրնար զատել:

ՈՒԽԻԵԼՄ.—[խորեն] Մեղիպէսներուն աս աւ
քիչ է:

ՃՈՐՃ.—Ամենէն պակաս զին վճարողն է աս
գործարանը, ուրիշ միջոց չկայ, երէկ իրիկունի
ուրոշումը գործադրելու է:

ՍԵՄԻ.—[վախիկոս շետակ մը] ի՞նչ . . .

ՈՒԽԻ.—Ի՞նչ . . . հրէայի սիրոտ տակնուվրայ
եղաւ. ի՞նչ պիտի ըլլայ՝ գործադուլ . . .

ՄԱՐ.—Նո՛, Ուխլելմ, այդպէս մի՛ ծաղրեր
Սէմին, ան այդպէս բաներէ վախցող չէ:

ՍԵՄԻ.—[սիրս առած] Ես ո՛չ հայ եմ, ո՛չ յոյն,
ո՛չ ալ իրլանտացի, որ գործադուլէ վախնամ. օր
մը հրէայ մը տեսնէր ես որ գործադուլէ վախ-
նայ և սիկիութիւն ընէ:

ՈՒԽԻ.—[կատակելով եւ ձեռքերը շարժելով]
Օյ, օյ, օյ, օյ . . .

ԶԱԽԻՆ.—Է տղաք ամօթ է, հրէայի ու իր-
լանտացիի, յոյնի ու հայի խնդիր մի՛ հանէք,
մինք բոլորս ալ գործաւոր ենք: Ամօթ է:

ՃՈՐՃ.—Կատակ կ'ընեն Զաւէն, այդչափ մըն
ալ եթէ կատակ չընենք ալ մեռնելու է:

ՈՒԽԻԵԼՄ.—Սէյ, Զաւէն, ի՞նչ եղաւ, վեր-
ջապէս բան մը չկրցիր ընել Հմայեակին:

ԶԱԽԻՆ.—Չգեցէք այդ սրիկան, գործաւո-
րութեան անունին արտա բերող դաւաճանը:

ՃՈՐՃ.—Ասկէ վերջը ա՛լ փորձելու չէ այդ
տղային բան մը ըսել, իր գոյնը գուրս տւաւ.
Հիմա սիկիութեան վրայ մատնիշութիւնն ալ ա-
ւելցուց. արդէն մեր միութեան անդամ ըլլալը
ամէն կերպով պէտք եղած տեղը լուր տւեր է.
չէք տեսներ գօրտենին վարմունքը՝ գործաւոր-

ներուն հետ . օր մը մէկին հետ լաւ միւսին հետ
գէշ կը վարւի և այսպէս շարունակաբար , որ-
պէսզի գործաւորները իրարու դէմ լարէ՝ մինչեւ
որ առիթէն օգտուելով՝ մէկիկ մէկիկ գուրս ընէ :

ՈՒԻԼ .— Շատ ուշ է մնացեր , քանի առիթը
ձեռքերնիս է՝ փախցնելու չէ . գործերուն շատ
ատենը , միութեան ալ ամենէն զօրաւոր ատենն
է . եթէ այսօր մենք չլնենք՝ վաղը մեզի շատ
լաւ կը փոխարինեն . օճին հետ բարեկամ ըլլա-
լու համար՝ միշտ գլուխին զարնելու է :

ՍԵՄԻ .— Վախնամ Հմայեակը վնասէ մեր գոր-
ծադույն :

ՈՒԻԼ .— [բուռնցքը ցուցելով] Անոր գործը
ինձ ձգեցէք , անոր այնպէս քիթը բերանը իրար
խառնեմ որ չկրնայ տեղէն շարժիւ :

ՄԱՐ .— Ինք հերիք չէր , իրեն հետ խոփած
ձերուկ մըն ալ համոզեր է որ անդամ չըլլայ :

ՃՈՐԾ .— Ան ձերուկը օ , ան ալ գործաւորի
տեղ դրեր մարդ կը հաշւես :

ԶԱԽԻՆ .— [էլենօխն] էլենօ՛ , աղջիկները լուր
ունին անշուշտ երէկ իրիկունի որոշումէն , ան-
շուշտ ժողովին ներկայ եղողներ կան . ի՞նչ է ա-
նոնց տրամադրութիւնը , անոնց մէջն ալ վատեր
կա՞ն :

ԷԼԵՆՕ .— Անոնք արգէն պատրաստ կը սպա-
սեն , խեղճերուն հոգին մինչեւ բերաննին եւ
կած է :

ՃՈՐԾ .— [առաջ գալով] Ընկերներ , ով որ ե-
քէկ իրիկուն ժողովին մէջ էր՝ արգէն գիտէ թէ՛
որոշում անցաւ որ գործաւորները այսօր պա-
հանջ ներկայացնեն գործատէրին , պահանջելով
որ ա .— զիները աւելցնէ , բ .— Ուիլսընը գուրս
հանէ : Ասկէ աւելի յարմար չէր կընար ըլլաւ և

քանի առիթը մեր ձեռքն է՝ մեր իրաւունքները
խլենք :

ԲՈՂՈՌԸ .— Ուրեմն այս կէսօրէն վերջ . Զա-
ւէն , գուն մեր ներկայացուցիչը կ'ըլլաս , մենք
կը սպասենք վերադարձիդ , կամ այս կամ ո՛չ :
[Խանդավառ վիճակի մէջ . ծեր գործաւորը
կու գալ]

ՄԱՐ .— Եկա՛ւ , նա՛ :

ՀԱՅԻ .— Ի՞նչ է : Ի՞նչ է աս տղաք :

ՈՒԻԼ .— [առաջ գալով] Ահ՝ որ գործիդ բնաւ
չգար :

ՀԱՅԻ .— Եթէ բան մը կայ՝ ըսէք , ես ալ գոր-
ծաւոր եմ գիտնամ :

ՈՒԻԼ .— Գործաւոր եթէ չըլլայիր՝ տւելի լաւ
էր . դո՞ւն ալ ինքինքդ գործաւորներու շար-
քին մէջ ես գրեր :

ՃՈՐԾ .— Եթէ իրական գործաւոր ըլլայիր՝ մեզի
անդամ կ'ըլլայիր և հիմա կը հասկնայիր թէ՛
ի՞նչ է :

ՀԱՅԻ .— Վախնամ գործադուլ պիտի ընէք :

ՍԵՄԻ .— Եթէ շատ կը վախնաս՝ ծոյդ քար մը
դիր :

ՀԱՅԻ .— Տղայութիւն մի՛ ընէք , թողուցէք
հաց մը գտեր ենք ուտենք . մենք կայընսի հետ
կընա՞նք կուիւ :

ԶԱԽԻՆ .— Կր կուինք և կը յաղթենք ա՛լ :
Ընկերներ , ես կ'երթամ ահա , սպասեցէք մին-
չեւ իմ վերադարձ :

ԲՈՂՈՌԸ .— Մի՛ վախնար , Զաւէն : [Զաւէն կը
մեկնի]

[Հմայեակ կը մտնէ անապահով մը]

ՏԵՍԻԼԻ.

ՆՈՅՆԵՐ [գործառնութեր կը խոհելին] եւ ՀՄԱՅԵԱԿ

ՀՄԱՅ. — Ի՞նչ է աս :

ՈՒԻԼ. — Քու ի՞նչ գործդդ է , ո՞վ քեզ մեզի վերակացու ըրաւ :

ՀԱՅԻ. — [Հմայեակին մօտենալով ու լալկան շետսով] Հմայեա'կ , գործադուլ պիտի ընեն , Զաւ և էնը գործատէրին դրկեցին :

ՀՄԱՅ. — Ի՞նչ , խենդ էք , տղա'ք , գուք այդ սրիկային խարւած էք :

ԲՈԼՈՐԸ. — Լո՛ք'...

ՈՒԻԼ. — Քենէ աւելի սրիկայ չկայ , բերանդ գոցէ , եթէ ոչ ակրաներդ կը կոտրտեմ . ամեփութենէ աւելի մեծ սրիկայութիւն չըլլար , իսկ դուն ամեփներու մեծն ես :

ՀԱՅԻ. — [լալկան շետսով] Ի՞նչ պիտի ընեմ ես զաւակներս , գուք երիտասարդ էք , տեղ մը գործ կը գտնէք , իսկ ես՝ ծեր և ընտանիքի տէր մարդ՝ ի՞նչ պիտի ընեմ :

ՄԵՄԻ. — Ես ալ ընտանիքի տէր մարդ եմ և զաւակներու ալ տէր , ես ինչ որ ընեմ՝ դուն ալ այն ըրէ , եթէ իրաւ մարդ ես :

ՃՈՐԸ. — Ո՞վ ըստաւ որ մինակ գուն ընտանիքի հոգ ունիս , մեզմէ իւրաքանչիւր մէկը տուն մը ունի պահելիք . ո՞վ ըստաւ որ մինչեւ մեր մահը Լայընսի գերի պիտի ըլլանք՝ որովհետեւ ընտանիքի տէր ենք :

ՀՄԱՅ. — Թոյլ տւէք ընկերնե՛ր ...

ԲՈԼՈՐԸ. — [աղմկելով] Մենք քու ընկերներդ չենք :

ՀՄԱՅ. — Կը կրկնեմ որ խարւած էք . Զաւէնը արդէն ուսանող է և վաղը իր գպրոցը կը շարունակէ , դուք կը մնաք բացը , մեզի չէ ինկեր

Այլնսի պէս ընկերութեան մը գէմ կուիլ :

ՈՒԻԼ. — Դուն , սրիկայ , բերանդ գոցէ լսի , մի՛ աշխատիր գործաւորներու միտքերը թուշաւորել :

ՀՄԱՅ. — Ես բոլորիդ առջեւ կը յայտարարեմ որ դուք սրիկայի մը խարւած էք , իսկ ես ձեզի շափ միամիտ չեմ հետեւելու անոր :

ՈՒԻԼ. — Քենէ ատկէ աւելին չէինք սպասեր , եթէ դուն մարդ ըլլայիր՝ մինչեւ հիմա մեզի ընկերացած կ'ըլլայիր , իսկ մենք քեզի պէս ըստրուկներուն ուրիշ լեզով կը խօսինք :

ՀԱՅԻ. — Ցզայութիւն մի՛ ընէք , գործերուն այս գէշ ատենը , դուք ըլլալէ վերջ՝ ուրիշներ ալ հացերէն մի՛ հանէք :

ՃՈՐԸ. — Այդ ստրուկի քարոզներդ գնա' ուրիշ տեղ ձախէ , խռափա'ծ ձերուկ :

ՀՄԱՅ. — Վաղը կը հասկնաք թէ՝ ո՞րքան չարաչար խարւած էք : Զաւէն բացարձակապէս ձեզի հոր կը փորէ :

ՈՒԻԼ. — Պիտի լուսու կ'ըսեմ քեզի :

ՀՄԱՅ. — [առանց կարեւորութիւն տալով] Զաւէն եթէ շխտակ մարդ ըլլար , ամբողջ աշխարհի առջեւ իր անբարոյականն չէր ներկայանար պոռնիկի մը հետ ապրելով : Գոնէ կանոնաւոր մէկին խարւէիք ...

ԷԼԷՆՕ. — [կատդած առաջ նետւելով] Դուն , պարոն ստրուկ գործակալը Լայընսի , գիտցի՛ր թէ՝ քենէ աւելի ստրուկ ու անբարոյական չկայ . իսկ այն «պոռնիկ» կոչածդ որ Զաւէնի կինն է , քու քոյրերէդ ու մայրէդ աւելի պատւաոր է , որ քեզի պէս սրիկայ մը ծնաւ : Լեզուդ քեզի քաշէ՛ , թունաւոր օձ , եթէ ոչ կնիկի ամբողջ կատաղութիւնովս գլուխդ կը փշրեմ : Ընկեր

Ներ ձեր ուխտին վրայ . իսկ այդ գործաւորութեան դաւաճանը թող տեսնէ վաղը թէ՝ ի՞նչ կրնայ ընել գիտակից գործաւորութիւնը :

ԲՈՂՈՐԾ .— [խանդավառ] Հուրբէյ, հուրբէյ...

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆԵՐ ԵՒ ՈՒԽԸԸՆ

ՈՒԽԸԸՆ .— [իրամայական] Ի՞նչ է աս, ի՞նչ խառնիճաղանձ է աս, ցրւեցէք, ամէն մարդ իր գործին : [փողը կը սուլի դուրսէն]

[Անսոլգ Շփորութիւն մը գործաւորներուն մեջ, ցւելու ժես մը]

ՀՄԱՅ .— [առաջ անցնելով] Մըստըս Ռւխլոն, այս ապուշները Զաւէնի խօսքերուն հաւատալով՝ գործարանատէրին դիմում ըրին՝ կամ գոհացում տալ իրենց կամ գործադուլ :

ՈՒԽԸԸՆՄ .— Կը չնորհաւորեմ ստրուկի փութեանութիւնդ, պարո՞ն զաւածան :

ՀՄԱՅ .— [սիրս առաջ] Ստրուկ դուն ես, ապօ՞ւ : [վրան յարձակելու ժես մը կ'ընի]

ՈՒԽԸԸՆՄ .— [արհամարինս] Ահա ստրկութեանդ ապացոյցը, ֆօրմէնիդ նարկացութեան լեզուգքացւեցաւ : Կորի՞ւ կ'ուզես, լա՞ւ հրամմէ : [պարաս]

ՈՒԽԸԸՆ .— Լուեցէք, ցրւեցէք, չէք հոսկնար : Ամէն մարդ իր գործին :

ՃՈՐՃ .— Զենք կրնար գործի սկսիլ Զաւէնին գալէն առած : Պարոն Ռւխլոն, մենք գործաւորական միութեան անգամ ենք և մեր պահանջները ներկայացուցած . դուք այս վայրկեանին մինակ ձեր պարոնին [մատեցոյց կ'ընի Հմայեակը] կրնաք հրամայել :

ՈՒԽԸԸՆ .— Գործաւորական միութեան անդամ :

ՃՈՐՃ .— Այսո՛, գործաւորական միութեան անդամ, յուզելու բնաւ տեղիք չկայ :

ՈՒԽԸԸՆ .— [ըլլորդիչ տեսով] Ինձի ինչո՞ւ չյաշտնեցիք ձեր պահանջները, ես միշտ ձեղի գոհացում տւած եմ : Ի՞նչ կ'ուզէք, ի՞նչ պահանջունիք ինձի լուէք, ես կը կարգադրեմ : Օ՞ն, աշխատեցէք, մի՛ խռնի իք, ամէն մարդ իր գործին :

ՃՈՐՃ .— Արգէն շատ ուշ է :

[Քանի մը գործաւորներ աւրակուսո՞ւմ մեխեաներուն կը մօսենան . Հմայեակ կը սկսի գործել]

ՈՒԽԸԸՆՄ .— Ո՛վ որ միութեան անդամ է, ո՛վ որ ձշմարխտ գործաւոր է՝ թող չգործէ՛, մի՛ գործէ՛ք ընկերներ . . .

ՈՒԽԸԸՆ .— [կատղած] Դուրս, գուրս, խառնակիւ :

ՈՒԽԸԸՆՄ .— [հեզնանելով] Մի՛ աճապարէք, պարո՞ն Ռւխլոն, քիչ մը վերջ կամ մենք դուրս կ'ենենք կամ դուք :

[Զաւէն կրակոս կը մսնի]

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆԵՐ ԵՒ ԶԱԽԵՆ

[Քոյս գործաւորները կը խռնի Զաւէնի ուրցը]

ՃՈԽԵՆ .— Ընկերներ, Լայլսս ընկերութիւնը տակաւին չէ՝ յագեցած մեր արխաններէն, կ'ուզէ մինչեւ վերջին կաթիլը քամել : Բայց գիտակից գործաւորութիւնը պիտի գիտնայ իր իրաւունքը պաշտպանել : Ո՛վ որ ուխտւած է, ո՛վ որ երգւնցած է, ո՛վ որ մարդ գործաւոր է դուրս . . .

[Գործաւորները կը խռնի, կը խառնի, կը պոռչան] :

Վարագոյրը կ'իշնի

Ա Ր Ա Ր Ի Ա Մ Գ Փ .

Թեմք կը ներկայացնէ առաջին արարւածք. Զա-
ւեմի եւ Հմայեակի սենեակը: Վարագայրը բացւե-
լուն՝ Հմայեակ ստի վրայ կանգնած է իր սենեակին
մէջ, իսկ Ռւիլսը նստած արռոի մը վրայ:

Տ Ե Ս Ի Լ Ա .

ՀՄԱՑԵԱԿ ԵՒ ՌԻԷԼՈՅՆ

ՈՒԻԼ .— Ի՞նչ ըրեր Հմայեա'կ :

ՀՄԱՅ .— ՈՒինչ, բան մըն ալ չկրցի ընել:
Անոնք այնպէս կազմակերպւած են դուրսէն ու
ներսէն, և մանաւանդ Զաւէնը անօթի ծարաւ
սակայն այնպէս պրօպականու կ'ընէ բանթողնե-
րուն մէջ, որ անկարելի է անոնց մօտենալ: Եւ
յետոյ, բոլորն ալ ատելութիւնով լեցւած են ինձ
գէմ. շարունակ ետեւէս կը պտաին ծիծելու հա-
մար:

ՈՒԻԼ .— Ներսէն կազմակերպւած են, ըսիր:

ՀՄԱՅ .— Այո՛, ձանը կազմակերպութեան մէջ
է և իբր սինի մտած է գործարանէն ներս՝ նո-
րերուն միտքն ալ պղտորելու համար:

ՈՒԻԼ .— Ճա՞նը:

ՀՄԱՅ .— Այո՛, ձանը. ես ստուգեցի որ այն
քանի մը գործաւորներու դուրս ելնելուն պատ-
ճառը ան է եղեր:

ՈՒԻԼ .— Վայ անիծած, այսօր իսկ ես շան
պէս գուրս կը շպրտեմ զի՞նքը: Բաէ՛, Հմայեակ,
ի՞նչ կարելի է ընել. ամենէն աւելի մեր հացին
կը սպառնայ՝ այս գործադուլը: Հայ սիկիներ շատ
կային ատեն մը, չե՞ս կրնար անոնք ճարել:

ՀՄԱՅ .— Կարծեմ միջոց չկայ. պէտք է ուրիշ
քաղաքներու թերթերուն մէջ յայտարարութիւն
տալ: Այո՛, կը ճանչնամ շատ մը հայեր որ ան-
պատճառ կուգան՝ եթէ նոյն իսկ գործ ունեցած
ըլլան: Իսկ ես անձամբ քաղաքները կը պտտիմ.
մըստըր Լայրնու ամէն մէկ բերած գործաւորիս
համար տասը տօլար պիտի վճարէ:

ՈՒԻԼ .— Գէշ գաղափար չէ: Բաւական դրամ
կը շինես:

ՀՄԱՅ .— Դրամը այնքան աչքիս չերեւնալ.
ատով չեմ գոհանար բնաւ՛, պէտք է Զաւէնը
ձերբակալել տալ, որովհետեւ ատով թէ՛ գործը
կը յաջողի և թէ՛ անգամ մը կլէնօն անպաշտ-
պան կը մնայ:

ՈՒԻԼ .— Արգէն անոր գէմ ձերբակալումի հը-
րաման (injunction) եղած է. ան այլեւս իրա-
ւունք չունի գործարանին շուրջը գեգերելու:

ՀՄԱՅ .— [ձայնը ցածրնելով] Զե՞նք կրնար իբր
խառնակիշ-յեղափոխական անունին հետ իր վե-
րայ անբարոյական անունն ալ փակցնել և գիշեր
ատեն սենեակին մէջ ձերբակալել տալ, որովհե-
տեւ կլէնօին հետ միասին կը բնակին շարունակ
և ո՛չ կրօնական և ո՛չ քաղաքական ամուսնու-
թիւն կնքած:

ՈՒԻԼ .— Կրնանք ընել. կեցիր ես փաստաբա-
նի մը գիմեմ և փօլիսներուն լուր տամ: Ամէն
բան ընելու է մեր նպատակին հասնելու համար:

ՀՄԱՅ .— Երէկի բերած գործաւորներս ինչ-
պէս էին:

ՈՒԻԼ .— Գործաւոր չեն. բոլոր գործերը կ'աւ-
րեն, բայց հիմա այդ բաները փնտակու ատե-
սէ. մեզի վնաս մը չկայ այդ բանին մէջ, ըն-
կերութիւնն է զնուաւողը. մեր ի՞նչ հոգը: [կը

կանգնի] լաւ, ես կ'երթամ. նոր բաներ իմանաւ-
լուդ պէս...

ՀՄԱՅ. — [ընդհատելով] Անհոգ եղիր:

ՈՒԻԼ. — Ուրիսըն զիմարկը առած կը քայի. սեմին վրայ] Կուտ-պայ Հմայեա'կ, կը տեսնւինք: [կ'երքայ]:

ՀՄԱՅ. — Կուտ-պայ: [սենեակին մէջ կը սկսի քայել՝ ձեռեերը զոհունակ կերպով բիւփելով]: Երկու յաջողութիւն մէկէն... Ախ, անգամ մը Զաւէնը բանտարկել տայի, անկէ վերջը... է... էլէնօ', սիրտիս մէջ ունեցած սէրս ատելութեան կը փոխւի ու ես այսօր քեզ իմ ճիրաններուս մէջ առած չարչարել կը բաղձամ... [մտածկոս] Խոկ եթէ այս ալ չյաջողեցաւ... [լուռ] Աչ, ո՛չ, Քէյտիի պէս ճատուկ մը ինձի գործակից ունենալէ վերջ, կարծեմ չպիտի կրնաս ձեռքէս ա- զատիլ էլէնօ': կիները նախանձու են, ու ես նախանձի ժահրով հոգիիդ մինչեւ խորը պիտի թունաւորեմ... [ուրախ դեմքով զիմարկը կ'առ- նե ու դուրս կ'ենե]:

ՏԵՍԻԼ Բ.

ԶԱՒԻՆ, զԱՀԷ եհ ՕՆՆԻԿ [կը մտնեն]

ԶԱՒԻՆ. — [սեմին վրայ] Սրիկան...

ՕՆՆԻԿ. — Ովկէ, Հմայեա'կը. առաջ լսէիր. Ի՞նչպէս մուռթին մէջէն կը սպրդի...

ԶԱՒԻՆ. — Այո՛, այն ինկանը, որի շնչած օդին կը մեղքնամ:

ՕՆՆԻԿ. — Զաւէն, այդ շանձագին ծեծելու բաժինը ինձի չէ՞ք հաներ: Այնպէս քիթը բերանը իրար խառնեմ... Ծօ՛, չէ՞ք գիտեր, ի՞նչ ինկած սրիկայ է եղեր. գլուխը միշտ կախ, մար- դու երեսին համարձակ չկրնար նայիլ, բայց մա-

տերը շարժելով, կնիկի պէս քիթին տակէն բամ-
բասող ու թունաւորիչ է: Փոխանակ այն ծերու-
կը ծեծելու՝ ատոր լու դաս մը տալու էիք:

ԶԱՒԻՆ. — Ան ալ կ'առնէ իր դասը:

ՎԱՀԵ. — [աքոռ մը առնելով] Զաւէն, ձշմա-
րիալ լսելով, ես շատ մեղքցայ այն ծերուկին: Կնծուս հարց մը ահա. Ի՞նչ ընէ այդ ծերուկը, ըն-
տանիքի, զաւակներու տէր, ինքն ալ տարիքը
առած, ուրիշ տեղ գործ գտնելու հաւանակա-
նութիւն չկայ իրեն համար: Եթէ գործադուլլ
չյաջողի՝ ա՛ռ քեզի գժբազդ ընտանիք մը:

ԶԱՒԻՆ. — Ես ալ քեզի չափ մեղքցայ անոր, նոյնիսկ համաձայն չէի անոր ծեծելուն, բայց
գիտե՞ս հոգիի ցաւը: Եւ յետոյ այնքան ալ ար-
դար չէ որ մեղքնանք մարդի մը որ չմեղքնար
ամբողջ գործաւորութեան շաներուն... Ես կը
կարծեմ, և ասիկա իմ հաւատքս է, թէ՛ այս
տեսակ պարագաներու տակ սարսափը ամենէն
ազդու գէնքն է որ կրնայ յաջողութիւնը ապա-
հովել: Չեն հասկնար. սպէտ են և գործատէրերը
այդ տգիտութիւնը կը շահագործեն: Եթէ ինձի
մնայ, սքէփ գործաւորները ծեծելուն հետ մէկ-
տեղ և առաջ գործատէրերը շան պէս կը փռեմ,
բայց...

ՕՆՆԻԿ. — Կեցցե՛ս, ծօ՛, ա՛խ, երանի թէ՛ ես
ալ ձեզի հետ բանթողներուն մէջ ըլլայի, քանի
մը սրիկաներ արիւնւայ շինէի:

ՎԱՀԵ. — Այդ ստրուկները, սակայն, իրենց
ստրկութեան պատասխանատունները չեն. պէտք
է զանոնք դաստիարակել:

ԶԱՒԻՆ. — Այո՛, պէտք է դաստիարակել: Իմ
մեծագոյն ցաւս եղած է ճիշդ այդ մասձումը թէ՛
անոնք կը պատժէին այն մեղքերուն համար, ո-

րոնք կը գործեն և, սակայն, անոնց պատասխանատուն չեն: Դաստիարակել, բայց դաստիարակելու միջոցն է խնդիրը. եթէ գործառողութիւնը ձեռքերը ծալլած սպասէ որ դաստիարակւին անոնք, կարծեմ յաւիտենապէս կը մնան ստրուկ: Ի՞նչ կ'ակնկալես, ո՞ւր պիտի դաստիարակւին անոնք. ամէն միջոց այսօր քափիթալիստին ձեռքն է, և ան իր ուզած ձեւով կը դաստիարակէ՝ իրեն ստրուկներ հասցնելու համար:

ՎԱՀԵ.—Կը նմանին թոքախտաւոր մնողքի մը զաւակներուն, որոնք առանց մեղքի՝ թոքախտաւոր կեանք մը քաշքշելու դատապարտւած են:

ՕՆԻԿ.—Ի՞նչ կ'ուզեն ան ըլլան. ես այն գիտեմ մինակ որ գործառոներու մէջ գիտակցութիւնը խորացնելու համար եթէ պէտք է ծեծ՝ ծեծ, եթէ պէտք է արիւն՝ արիւն... եւ ի՞նչ կը կարծես, վահէ՛, կը կարծե՞ս որ այսօրի գիտակից կազմակերպութիւնները՝ առանց արիւնի այդ գիտակցութեան տիրացեր են:

ՎԱՀԵ.—Ալ իւնը անխուսափելին է, 0ննի՛կ, կ'երեւի ես չհամկցւեցայ, մինակ թէ՛ մասնակի գործադուլեր և այն յաճախ մնասակար կ'ըլլան քան թէ օգտակար. իմ հաւատքու է թէ՛ ընդհ. գործադուլերն են որ բաղձացւած օրին պիտի հասցնեն:

ԶԱՒԿԻՆ.—Առանց մասնակիին ընդհանուր երեք չկայ: Մասնակիներն են որ ընդհանուրի դաշտաբը ստեղծած են և պիտի ստեղծեն գործնալ: Այսօր կինի մէջ, գրեթէ պղտիկ բացառութիւնով, բոլոր գործարանները գործաւորական միութեան հետ կապւած են. կը կարծե՞ս որ առ

նոնք մէկ օրէն միւսը եղան. եթէ վիճակագրութիւն մը տեղի ունենայ կինի մէջ, ապահովաբար հարիւրաւորներ պիտի հաշւըւին մասնակի գործադուները, որոնց իսկ արդիւնքն է այսօրը:

ՕՆԻԿ.—Է՛, հերիք է, եթէ ոչ իմ հեղինակաւոր կարծիքովս կ'եղրափակեմ:

ՎԱՀԵ.—Զէ՛, վազ անցանք քու հեղինակաւոր կարծիքէդ: Զանձրացա՞ր, 0ննի՛կ: Աղէկ ես, աղէկ, ամէն բանէ չուտ կը ձանձրանաս: Մինակ եթէ աղջիկի խօսք ըլլայ՝ մարդի կարգ չես տար, [Զաւէնին] ի՞նչ կը խորհիս Զաւէն, կը կարծէ՞ս որ գործադուլը կը յաջողի:

ԶԱՒԿԻՆ.—Գործադուլի մը յաջողութեան բուլոր պայմանները լի են. բանթողները չափով մը իրենց ապրուստը կ'առնեն և անոնց եռանդն ալ միշտ վառ է, մինչեւ իսկ սպաննութիւններ ընելու չափ առաջ գացած:

ՕՆԻԿ.—[ընդհանելով] Քեզի պէս պրօպականտիստ ունենալէ վերջ կը հաւատամ:

ԶԱՒԿԻՆ.—[շարունակելով] Միայն թէ... [ցաւի ժպիտով մը] կը հաւատա՞ք տղա՞ք, եթէ ըսկոմ թէ մեր՝ գործառոներուս դատին դաւաճանողներուն մէջ Տիրանն ալ իր բաժինը բերած է կղերականորէն...

ՕՆԻԿ.—Ի՞նչ...

ՎԱՀԵ.—Իրա՞ւ կ'ըսես:

ԶԱՒԿԻՆ.—Հմայեակը արդէն ծանօթ է և իր անկարելին կ'ընէ. կարելի է ըսել թէ՛ այդ ուրիշէն աւելին չէր կարելի սպասել, մասնաւանդ որ մարդը որոշ մտածումներ կը հետապնդէ. Զաւէնի անկառմ, էլէնօի տիրացում իր իտէալը կը կազմեն...

ՕՆՆԻԿ .— [բրդիատելով] «Անխելք չունը մաս
կը յուսայ կարկանդակէն» . . . իրաւ էլէնօն ուր է:
ՎԱՀԵ .— Ի՞նչ կ'ընդհատես, թող նայինք . . .
Տիրանը ի՞նչ ըրած է, Զաւէ՛ն . . .

ԶԱՀԵ .— Ի՞նչ պիտի ընէ . չէ՞ որ տէրտէր-
ցու է . Ի՞նչ կ'ընեն տէրտէրները . իսկ ատոր
վրայ աւելցուր Տիրին կայընսի սիրականի հան-
գամանքն ալ և արդէն հասկնալի կ'րլայ: Գանէ
մարդ ազնւութիւնը կ'ունենայ լուռ մնալու, բայց
մեր տէրտէրցու Տիրանը այդ ազնւութիւնը չու-
նի . գացեր բանթող գործաւորներուն համո-
գել փորձեր է որ ետ երթան:

ՎԱՀԵ .— [ինքնանենով] Կ'երեւի իր վայելած ա-
ռաւելութիւններուն փոխարինել կ'ուզէ գործ-
նականապէս :

ՕՆՆԻԿ .— Վայ անամօթ վայ . . . մարդ ի՞նչ-
պէս չխղճահարիր՝ մտածելով որ գոնէ իրեն հա-
կառակորդը այսքան տարիի ծանօթ ընկեր մըն է :

ԶԱՀԵ .— Ան կ'երեւի տակաւին լաւ չէ ճանչ-
ցեր զիս: Ան տակաւին չգիտեր թէ՝ ես գիտեմ
այդ պարագան և կարծեմ ինձի պիտի գայ հա-
մոզելու, որովհետեւ իր հանդպած գործաւորնե-
րը թելագրեր են իրեն՝ իր ըսելիքը ինձի ըսել:

ՕՆՆԻԿ .— Աղւոր գաս մը տալու է անոր:

ԶԱՀԵ .— Թող գայ ան . . . եթէ ես անոր ա-
րիւնը չցամքեցնեմ՝ թող Տիրանը խորհի որ լաւ
բան մը ըրաւ: Այդպէսներուն արիւնը խմելու
է ուրիշ ոչինչ, որովհետեւ անոնք միշտ ուրիշ-
ներու արիւնը կը խմեն:

ՎԱՀԵ .— Ե . . . ընդունէ թէ մէջդ քիչ մը վայ-
րագ չիղ կայ:

ԶԱՀԵ .— Այո՛, և ուրախ եմ ու համար ա-
տոր համար: Եթէ անխուսափելին է արիւն խը-

մել, պէտք է խմել . որքան չուտ այնքան լաւ:
Վահէ՛, ճշմարտութիւնը ժամանակ չունի, ամէն
օր իր ժամանակն է:

ՎԱՀԵ .— Ահա արմատական գաղափարներէդ
հատ մըն ալ:

ԶԱՀԵ .— Կը մեղագրե՞ս զիս . . . բայց հա-
ւատքս է այդ: Եթէ գուն ալ ինձի չափ տառա-
պած ըլլայիր ու խարտած, Վահէ՛, գուն ալ ինձ
պէս պիտի մտածէիր: Կը տեսնե՞ս վատ էնթրիք-
ները . մարդ ըսւածը քիչ մը քաջութիւն ունե-
նալու է իր ընելիքը քաջի պէս ընելու համար,
իսկ անոնք որ վատօրէն կուզեն իրենց թշնա-
մին կանակէն զարնել, անոնց գլուխին վրայ
գարշապարով կոխելու է առանց խզճահարւելու:

ՎԱՀԵ .— Քիչ մը զգոյշ ըլլալու է, օր մը գը-
լուխիդ մեծ փորձանք մը կը բանսա:

ԶԱՀԵ .— Տակաւին փորձանքին մեծ ու նորը
մնացե՞ր է:

ՎԱՀԵ .— [կատակելով] Օր մը իրը անիշխա-
նական կը բռնեն գուրս կը հանեն երկիրէն հա՛ . . .

ՕՆՆԻԿ .— [կատակելով] Այս ատեն թափառ-
կան չայը անունով լէպ մը կը գրէ: [բոլորը կը
խնդրան]

ԶԱՀԵ .— Կատակը մէկ կողմ, իմ հաւատքս
է թէ՝ այս երկիրը բաղձացւած ընկերութիւնը
ունենալու համար պէտք է անդամ մը արիւնի
մէջ լողայ, ուրիշ ո՛չ մէկ միջոց կրնայ պէտք ե-
ղած իտէալը իրականացնել,

ՕՆՆԻԿ .— [խօսքը փոխելով] Իրաւ ուր է ե-
լէնօ՞ն, չըսիր:

ԶԱՀԵ .— Էլէնօն հիմա ինձի չափ կատակի
գարձած է . Ի՞նչ կ'ակնկալէիր այն փափուկ աղ-
ջիկէն . գացեր է աղջիկներուն մէջ պրօպականտ

ընելու և վաղի ցոյցի թափորին համար անոնք հաւաքելու :

ՎԱՀԵ .—Վաղը թափո՞ր պիտի դառնաք :

ՕՆՆԻԿ .—ԶԱՅԻ՞Ն , Զաւէ՞ն :

ԶԱԻԿՆ .—Այո՛ , և Լայնսի գործարանին առշել ատենախօսելու ալ պատիւը պիտի ունենամ :

ՕՆՆԻԿ .—Է՛ , վաղը ես գործարան չեմ երթար :

ՎԱՀԵ .—Բայց Զաւէ՞ն , զգուշ խօսքերուդ մէջ , կը ձերբակալին և գուցէ վնասակար ըլլայ :

ՕՆՆԻԿ .—Ըլլալիքը թող ըլլայ . Վահէն արդէն քիչ մը շատ զգուշաւոր է :

ՎԱՀԵ .—Կեցցե՞ն , էլէնօ . վերջապէս գտար աղջիկը որ իտէալդ մարմնացուց Զաւէ՞ն :

ԶԱԻԿՆ .—Այնքան երջանիկ եմ իրմով . . . և կը հաւատամ որ ան իր գաղափարներուն մէջ աւելի կը զարգանայ : Այո՛ , գտայ այն կին ընկերը , որ հաւատքիս կինը կը կազմէր . . . Գիտէ՞ք , դիւրին է գտնել ընկերուհի . գտայ իտէալիս մարմնացումը , հոգս չէ թէ՝ ամբողջ աշխարհը զիս հայածէ :

ՕՆՆԻԿ .—Հոգդ չըլլալը վաղուց գիտէինք :

ՎԱՀԵ .—Ես իմ հաշիւխս , այնքան մեծ զոհութիւնն չեմ ըներ՝ անպատճառ իտէալս կատարելապէս մարմնաւորւած տեսնելու համար . աշխարհին դէմ չեմ՝ պայքարիր՝ ամէն սովորութիւնն ու կեղծիք քանդելու համար , բայց միեւնոյն ատեն ալ չէ թէ քեզ չեմ մեղագրեր , այլ կը գովեմ : Ինչ կ'ուզեն այն թող ըսեն , մենք իրար կը ձանձնանք :

ԶԱԻԿՆ .—Եթէ պէտք ըլլայ , Իպսէնի հետ , սակայն քիչ մը տարբեր իմաստով , ես ալ կը պուամ , «Մինակ եմ և հզօրագոյն» :

ՕՆՆԻԿ .— [կանգնելով] Ոտքի ձայն կուգայ ։ [գուոր կը զարնւի] Yes !

[Տիրան ներս կը մտնէ]

ՏԵՍԻԼ Գ .

ՆՈՅՆԵՐ ԵՒ ՏԻՐԱԾ

ՏԻՐԱՆ .—ՀԵԼՇ . . .

ՕՆՆԻԿ ԵՒ ՎԱՀԵ .—ՀԵԼՇ . . . [Զաւէն դէմք մը կը ժինէ որ պժգանք ու գոհունակութիւն կ'արտայալք]

ՕՆՆԻԿ .— [կեղծ շետով] Վայ Տիրան , աս ո՞ւ բնու , եկո՞ւր նայինք , կ'երեւի վագանցդ շատ հաճելի էր որ մեզ մոռցար . մարդ գոնէ քարդ մը կը դրէքր :

ՏԻՐԱՆ .—Վագանց չունեցայ Օննիկ :

ԶԱԻԿՆ .— [ինքնուս] Վագանցի ատեննն է . աւելի սրբազն միսինն ունէր :

ՎԱՀԵ .— [չիսակնալ կեղծելով] Ի՞նչ , կ'երեւի արդէն սկսեր ես վարժութեան , հա՞ Տիրա՞ն :

ՏԻՐԱՆ .— Բարին մեծութիւնը ուտողը կ'զգայ :

ԶԱԻԿՆ .— [սուր] Լաւ որ զգացիր , իմ նպատակս արդէն զգացնել էր . գաւառական առած մը կայ ճիշդ տեղին բայց . . . [ինքնուս] Է՛ , սկսէ նայինք , պատւելի Տիրան , սկսէ միսիօնիդ , կարծեմ ինձի ալ այդ նպատակով կ'ալցելես այսօր :

ՏԻՐԱՆ .— [ցաւցած շետով] Մեծ մարդերու ինձ չէ մնացեր միսիօնով ներկայանալ :

ԶԱԻԿՆ .— Ատոր համար պկտիկ մարդերու , գործաւորներու կ'երթաս : Կը չնորհաւորիմ կոչումիդ մեծութիւնը :

ՎԱՀԵ .— [իբր թէ անեղեալ] Ի՞նչ է , նոր բան մը կայ : Եթէ գաղտնի է մենք երթանք : [կը կանգնի]

ԶԱՀԻԿՆ. — Նստէ՛, Վահէ՛, գաղտնի ոչխնչ կայ . նոր բանը այն է , որ մեր պատելի Տիրամը արդէն սկսեր է իր շահագործող գասակարգակից - ներու գործակալ արձանագրւիլ . և արդէն իր հովիւի հանգամանքով մըստըր Լայընսի շահերը պաշտպանել կը փորձէ՝ դաւաճանելով իր հօտին : Օննիկ . — Կը չնորհաւորեմ , Տիրա՞ն :

ՏԻՐԱՆ. — Ես չեմ ակնկալեր այսչափ ուռւր հեգնանք , Զաւէ՛ն , բայց գիտցիր թէ նորէն չեմ ցաւ իր քենէ :

ԶԱՀԻԿՆ. — Իսկ ես քենէ չեմ ակնկալեր դաւաճանութիւն , Տիրա՞ն , միեւնոյն տաեն կը չնորհաւորեմ քահանայական հեղութիւնդ : [լուրջ] Գիտցի՞ր , Տիրա՞ն , եթէ եղբայրս իսկ ըլլայիր , այն վայրկեանէն՝ երբ դուն այդ վատութիւնը գործեցիր , այն վայրկեանէն արդէն ցաւելով կ'ատեմ քեզ , և երբ ատեմ դժօխօրէն կ'ատեմ :

ՎԱՀԻԿՆ. — Զաւէ՛ն , պէտք չկայ այդպէս խօսելու . գուցէ թիւրիմացութիւն մը կայ մէջտեղ , թող որ Տիրանն ալ խօսի :

ՏԻՐԱՆ. — [Միւր առած եւ ինքնապատվան տեսով] Իրաւ է որ երբ կ'ըսեն թէ՝ բարիք կամենաս , չարիք կը ծնի : Զեմ գիտեր թէ՝ իմացեր էք , այն ծերուկ Համի իմմին ծեծած են գէշ կերպով , այդ առիթով ես այցելած եմ գործաւորներուն՝ ուզզակի այն մտածումով որ հայ անունին անպատւութիւն կը բերեն այդ տեսակ արարքները , իմ գիրքի բեռումով ուզած եմ եղբայրսիւութիւն քարողել :

ԶԱՀԻԿՆ. — [Ինքնանիով] Յետո՞յ . . .

ՏԻՐԱՆ. — [Առանց կարեւորութիւն տալու] Չեմ գիտեր թէ՝ ի՞նչ գէշ բան կայ ըրածիս մէջ : Ատ- կէ զատ տակաւին բոլորովին ուրիշ մտածումով

մը այսօր այստեղ եկայ . մինչդեռ ուրախ տրամադրութիւնով կուգալի՝ ահա բոլորովին հակառակի կը վերջանայ :

ՎԱՀԻԿՆ. — [Ընդհատելով] Ի՞նչ :

ՏԻՐԱՆ. — Ուրախ էի որ վերջապէս Զաւէնը պիտի կրնար իր նպատակին հասնիլ ու ապագան պատրաստել : Օր Լայընս , որ Զաւէնի գառնիկերուհին է , խուլ սէր մը ունի եղեր անոր հանգէպ և անցած օրն ալ նամակ մը գրած բայց պատասխան չէ ստացած , հետեւաբար ինձ յանձնարարեց իմանալ պատճառը և իմացնել որ , Զաւէնի համար ամէն բան պատրաստ է ընելու : Այնքան ցաւեցաւ երբ իրեն իմացուցի թէ՝ գործաւորութիւն կ'ընէ : Իսկ իմ օգտակար ըլլալու մտածումիս մէջ , ես բաղձացի որ այս գործագուլ չուտ վերջանայ , որովհետեւ ատիկա կը բնար վնասել գործին . . .

ԶԱՀԻԿՆ. — [Կատղած] Լուէ՛ , Տիրա՞ն , ամօթ է քեզի իրը պատւելիցուի որ սատանայօրէն կը ստես . . . Դուն , Տիրա՞ն , ձիգւիթի կատարեալ տիպ մը գուրս կուգաս . . .

ՎԱՀԻԿՆ. — [Ընդհատելով] Էէ՛ , Զաւէ՛ն . . .

ԶԱՀԻԿՆ. — Խնդրեմ , Վահէ՛ , ձգէ որ խօսիմ , որովհետեւ այս արտառոց կեղծիքին առջեւ քարերը կ'աղաղակին . ու այս մարդը զիս տխմարի տեղ կը գնէ : Կը լսէ՞ք , հայ պատիւին համար կը խօսի և սակայն աւելի մեծ ամօթ մը փակցընել կ'աշխատի անոր ճակատին . Տիրան , գո՛ւն կը ստես , գո՛ւն կը կեղծես . հայ անունը երբեք անպատւուած չըլլար գիտակից գործաւորի բըռունցքով , արիւն թափելով , քան թէ՝ գործաւորի իրաւունքներուն գէմ գաւաճանելով . . . Դուն եղբայրսիրութեան անունով կը խօսիս , բայց կը

թքնեմ ես այդ եղբայրասիրութեանդ վրայ, երբ գուն կ'երթաս ատելութիւն սերմանելու իրարու մեջ, քաջալերելով որ իրարու ձեռքէ վատարար հաց խլեն... Եւ գուն զիս կը մտածես, ապագայիս վրայ կը գուրգուրաշս... հա՛, հա՛, հա՛... իրա՞ւ... ո՛րքան ազնիւ ես... Ծնորհակալութիւններս, պարո՞ն. պարոն կը կոչեմ քեզ, որովհետեւ ասիկա վերջինը պիտի ըլլայ մեր տեսակցութեան, որովհետեւ ես մեր հին ծանօթութիւններուն վրայ խոչոր քար մը գրեր եմ արդէն, մեր յիշատակները պէտք է թաղւին, անոնք ասկէ վերջ միայն ատելութեանս գժոխքը կրնան բորբոքել: Լսէ՛, պարո՞ն, որ ես կը մերժեմ Օր Հայրնաի սէրը ինձ խոստացւած ամէնտափայլուն ապագայով. ինձ համար նախընտարելի է օրական հացիս աշխատող գործաւոր մը ըլլալ՝ քան ծախւած մը քեզի պէս: Գիտցիր թէ՛ եթէ ո՛չ մէկ պատճառ չունենայի մերժումի, քու, երբ կղերականի, միջնորդութիւթիւնդ բաւական էր որ ատելով մերժէի այդ սէրը... Զամշցա՞ր գո՞ւն, Տիրա՞ն, չամչցա՞ր, երբ այդ տեսակ կեղծիքով ինձ ներկայացար, գո՞ւն որ զիս այնքան լաւ պէտք է ճանչցած ըլլայիր, և մանաւանդ որ գիտէիր թէ՛ ես կին մը ունիմ, կին մը, որ Օր Հայրնաներէ շատ վեր է ու շատ պատւաւոր: Թէ ոչ մտածեցիր որ անպատկ կինակցութիւն մըն է ասիկա ժամանակի մը համար. գիտցի՛ր ուրիշն վերջին անգամն ըլլալով որ իմ պսակս, իմ խօսքս ու իմ սէրս եղած են շատ աւելի վսեմ ու մաքուր՝ քան քու և քեզ պէս կղերականներու գըրած պիղծ պսակը: Տա՛ր քեզ հետ քու հոգածութիւնդ, տա՛ր, որովհետեւ անկէ աւելի նախատինք չկրնար ըլլալ ինձ... [դուռը ցուցնելով]

Հո՞ն է գուռը, պարո՞ն, ա՛ո գլխարկդ և գո՞ւրս... [բալոր սփոթած] Աս իմ սենեակս է ուր ճմարտութեան սատանաները կը բնակին ու կը պըղծըւի անոնց սրբութիւնը՝ սուտ աստւածներու պաշտօնեաններէն... Կը հրամայեմ քեզի, գո՞ւրս այս սենեակէն... [Միշտ դուռը մատնացոյց կ'ընէ, Տիրան գլխարկոր կը հեռանայ, 066իկ եւ Վահե Ետեւեն կը նային]:

ՏԵՍԻԼԻ. Դ.

ԶԱԽԵՆ, ՎԱՀԵ ԵՒ 066ԻԿ

ՎԱՀԵ.—[ԽՈՌԻ ԽՈՎՈՎ] Շատ ծանր էր, Զաւէ՞ն...

066ԻԿ.—[ԲԵՂԻԱՏԵԼՈՎ] Շատ լաւ ըրաւ:

ՎԱՀԵ.—Է... Վերջապէս կրնար աւելի թիւթեւ ըլլաւ:

066ԻԿ.—Է՛, քաւազանով կը ծեծին: Կեցցե՞ս, Զաւէ՞ն, [կը գրկի] մուրատիդ հասար... Բացց հրաշափ էր... [կը խնդայ]:

ՔԱՅՑՑԻ.—[ՍԵՄԻԲՆ ՎՐԱՅԵՆ] Պարոն Զաւէ՞ն, օքիորդ մը ծեղ տեսնել կ'ուզէ...:

ՎԱՀԵ.—ԵՐԺԱՆՔ, 066ԻԿ: [Գլխարկները կ'առնեն]

ԶԱԽԵՆ.—Կրնայ գալ: [Քեյս կը մեկնի]

066ԻԿ ԵՒ ՎԱՀԵ.—[ՖԱԼԵԼՈՎ] Կուտ-պայ, Զաւէ՞ն:

ԶԱԽԵՆ.—Կուտ-պայ...:

[066ԻԿ սուլելով իսկ Վահե անձայն կը հեռանան]

ՏԵՍԻԼԻ. Ե.

ԶԱԽԵՆ [առանձին]

Ո՛վ պոռնիկ մարդկութիւն... [Տիսուր] ինչո՞ւ մարդեր այսքան ինկած կ'ըլլան, ինչո՞ւ... Կ'արժէ երազ մը կեանքին համար այսքան ստորնու-

թիւն ու կեղծիք... գոնէ սրբութեան, անկեղծութեան, ասպետութեան անունով մի՛ խօսիք, ով մարդակերպ սողուններ... [ինչպիեսէ բորբոքած] կ'ատեմ քեզ, կ'ատեմ, ով ինկած մարդկութիւն, գուն ատելութեան դժոխք մը դարձուցիր զայն՝ որ սէրի գրախա մըն էր, ու ես քեզ մահացնել կը տենչահարիմ, որովհետեւ վազի մարդկութիւնը կը սիրեմ... [դուռը կը զարնըլի] Yes! [դուռը կը բացւի, Քարերին ծրատուն, ներմակ հազուսներով ու գեղեցիկ զբիխարկով սեմին փրայ կ'երեւնալ]

ՏԵՍԻԼ. Զ.

ԶԱԻԿՆ ԵՒ ՔԱԹԵՐԻՆ

ԶԱԻԿՆ.—[ապօած ու անակնկալի եկողի տեսով] Օրիորդ կայլնաս...

ՔԱՄՔԵՐԻՆ.—[ներս մՏնելով] Բարեւ, Պարոն Զաւէն, ինչո՞ւ այսքան շփոթեցաք, միթէ՞ անակնկալ մըն էր աս:

ԶԱԻԿՆ.—[արոռ մը տալով] Հրամեցէք օրիորդ, բացարձակ անակնկալ մը: Գիտէի թէ՝ ամերիկուհիներ անակնկալներու սիրահար են, բայց երբեք չէի սպասեր ձեզ գպրցէն դուրս և ան ալ սա խեղճուկ սենեակին մէջ տեսնել:

ՔԱԹԵՐ.—[նստելով] Ծնորհակալ եմ: Կ'երեւի շատ հպարտ կը կարծէք զիս, բայց միթէ՞ նամակս ստացած չէիք:

ԶԱԻԿՆ.—[արոռ մը առնելով] Երբեք:

ՔԱԹԵՐ.—Տարօրինա՛կ բան... [կը մՏածէ]

ԶԱԻԿՆ.—Արգեօք շատ ծանրակշիռ բան մը կար ձեր նամակին մէջ. ինչո՞ւ այդպէս տիրեցք, թերեւս առաւին չէ հասած...

ՔԱԹԵՐ.—[Տիսուր] Պէտք էր անպատճառ հա-

սած ըլլար, քանի մը օր առաջ զրկած եմ... [կը հառաջէ]

ԶԱԻԿՆ.—Լա՛ւ, ան ատեն կրնաք հիմա ուղղակի ըսել, ձեր տրամագրութեան տակն եմ, լեզուն աւելի լաւ կրնայ արտայայտուիլ քան գըրիչը:

ՔԱԹ.—Ես հակառակը պիտի ըսէի, Զաւէն, ու ներողութիւն այսպէս կոչելուս...

ԶԱԻԿՆ.—[ընդիմատելով] Խնդրեմ...

ՔԱԹ.—Շատ անգամ լեզուն շատ տկար ու անհամարձակ է քան գրիչը:

ԶԱԻԿՆ.—Վերջապէս ատիկա ամերիկուհիներու համար չէ բուած: Եթէ մեր գործադրութիմասին պիտի խօսիք, կրնայի ձեզի օգնել խօսքը բանալու համար: Նախապէս ըսեմ սակայն որ գործաւորներու պահանջները այնքան տարրական ու արդար են որ կը զարմանամ ընկերութեան այս յամառութեան վրայ և կը դատապարտեմ ձեր հայրը: Խնդրեմ չվիրաւորւիք:

ՔԱԹ.—Ո՛չ, ո՛չ, բայց ես երբեք չէի մտածեր այդ նիւթի մասին խօսիլ, իրաւ է թէ բաղդը զիս հարուստի աղջիկ ըրած է, բայց այնքան ալ հպարտ չեմ այդ բաղդաւորութեանս համար:

ԶԱԻԿՆ.—Ուրեմն...

ՔԱԹ.—[հառաջելով] Զաւէն, սիրտի խնդիր է և ո՛չ դրամի...

ԶԱԻԿՆ.—[խօսիք իմասր շնակնալ կեղծելով] Բայց տարօրինակ բան, ինչպէս արգեօք կրնամ օգնել ձեզ սիրտի խնդիրի մը մէջ, խնդրեմ լսուէք, խօսեցէք ինձ հետ շատ անկեղծ ու համարձակ, որովհետեւ...

ՔԱԹ.—Ինչպէս կրնամ օգնել... Զաւէն, թոյլ տուր ինձ աւելի մտերիմ ըլլալ քեզ հետ:

ԶԱԼԻԿՆ. — Ծատ սիրով, օրիորդ, ես արդէն
ատելով կ'ատեմ կեղծ ձեւակերպութիւնները:
ՔԱՂԹ. — Մինչեւ գարսցին մէջ ես ուզեցի ա-
ռիթ մը ունենամ քեզ հետ խօսելու, բայց . . . [կը
նառաջէ] Գիտցիր, Զաւէն, թէ՛ երկար տառա-
պումներէ վերջն է որ վերջապէս ուզեցի սիրտա-
դնել նամակի մը մէջ ու ան ալ կորուցաւ, գու-
ցէ գէշ նշան է այդ . . . [տիտր Զաւէնի երեսը կը
նայի]

ԶԱԼԻԿՆ. — [միւս իր խօսքերուն մէջ զգուշաւոր] Եթէ, օրիո՞րդ, այն զգացումն է, որի «սէր» կ'ը-
սեն, եթէ անոր մասին է որ կը խօսիք, ո՞հ, խնդրեմ, ես կը վախնամ այդ բառէն, կը վախ-
նամ ձեզի համար, որովհետեւ ես չեմ հաւատար
թէ՝ դուք կրնաք սիրել . . .

ՔԱՂԹ. — [Զաւէնի ձեռքը բոնելով] Սիրել . . .
բայց ինչո՞ւ, Զաւէն, ինչո՞ւ չեմ կրնար քեզ սի-
րել: Կրնա՞մ և կր սիրեմ արդէն: Զաւէնի ձեռ-
քը կուրծքին կը սեղմէ]

ԶԱԼԻԿՆ. — [ձեռքը բաւել փորձելով] [գորովա-
գին] Իմ սէրս Քաթէրին, իմ սէրս, վատանգաւոր
գժոխք մըն է, մի՛ փորձէք մօտենալ անոր, ո-
րովհետեւ չէք գիմանար այդ կրակին, դուք շատ
փափուկ էք:

ՔԱՂԹ. — [աւելի մօտենալով եւ սեղմելով ձեռ-
քը] Կ'ընդունիմ թէ՝ այդպէս է, կ'ընդունիմ թէ՝
Զաւէն, քու սէրդ գժոխք մըն է, որովհետեւ
կը սիրեմ քեզ ու կետնքս գժոխք մը եղաւ,
բայց թոյլ տուր, Զաւէն, թոյլ տուր որ սիրեմ
այդ գժոխքը . . .

ԶԱԼԻԿՆ. — [տիտր կանգնելով] Զգէ զիս, Քա-
թէրին . . . [անկողին վրայ կը նսի մածկոն՝
դիմք ձեռքերուն մէջ]

ՔԱՂԹ. — [աղաչող շեշտով] Զաւէն . . . [աղեր-
սող նայածքով կը նայի. լուռթիւն]

ԶԱԼԻԿՆ. — [ինքնիրեն] Խեղճ աղջիկ . . . ի՞նչպէս
ըսել իրեն . . . բայց պէտք է վշրուի քու սիրտգ . . .
որովհետեւ . . .

ՔԱՂԹ. — [տեղեն ելնելով եւ դէպի Զաւէնը եր-
բալով] Խօսէ՛ ինձ, Զաւէն . . . բայց խնայէ՛ . . .
որովհետեւ սիրոզ սիրտ մը ունիմ . . . ի՞նչ որ
ուզես, ի՞նչ որ պահանջես պատրաստ եմ տալ
քեզ, մինակ սէրդ տուր ինձ, մինակ թոյլ տուր
որ սիրեմ քեզ . . .

ԶԱԼԻԿՆ. — [կանգնած եւ ինքնիրեն] Եթէ կտ-
րելի ըլլար ծախել սէրս . . .

ՔԱՂԹ. — Խօսէ՛ ինձ, Զաւէն, քու լուռթիւնդ
կը սպահնէ զիս, խօսէ՛ . . .

ԶԱԼԻԿՆ. — [լյուտեղ, այս նեղ մթնոլորտին մէջ
չեմ կրնար խօսիլ քեզ, Քաթէրին, կ'ուզեմ խօ-
սիլ, բայց . . . եկուր, Քաթէրին, ես կ'ուզեմ ը-
սել քեզ սմէն բան, միայն քաջ հղիր . . .

ՔԱՂԹ. — [Զաւէնի թեւը առնելով] Երթանք ու-
րեմն, ուր որ կ'ուզես, ուր որ առաջնորդես . . .
Մի՛ վախցներ զիս, Զաւէն . . .

[Երկուք միասին, Քաթէրին գուրզուրանելով
Զաւէնի երեսը կը նայի. Զաւէն մեկնենաբար կը
խալէ գլխարկը առաջ, ու կը մեկնին. Քէյսի եւ
Հմայեալ կը մենեն Հմայեալին սենեալը]:

ՏԵՍԻԼ է.

ՀՄԱՅԵԱԼ եի Քէյսի

Քէյսի. — [ժպտելով] Բախտգ հրացալի է, Հը-
մայեա՛կ, ես մինակ նամակը բաւական կը հա-
մարէի, ահա աւելի զօրաւոր միջոց մըն ալ-
տեսա՞ր, Զաւէնը այն աղջիկին թեւը մտած
կ'երթար:

ՀՄԱՅ. — [գոհ] Տեսայ, տեսայ... [շարամիս դեմքով] հիմա տեսնենք ձարպիկութիւնդ. կարգը քուկդէ. վարձատրութիւնդ շատ պիտի լւլայ Քեյտ...

ԹԵՅՏԻ. — Քիչ վերջը էլէնօն անպատճառ տուն կը վերադառնայ, սպասէ տես թէ՝ ինչպէս կը նեն.

ՀՄԱՅ. — [միշ նոյն դեմքով կարծիս մտապահեր մը կը հետապնդէ] եթէ յաջողեցա՛ր...
ԹԵՅՏԻ. — Թատրոն մը պիտի տանիս զիս, անանկ չէ...

ՀՄԱՅ. — Թատրոն չէ, քեզ արքայութիւն անգամ կը տանիմ:

ԹԵՅՏԻ. — [ուշադրութիւն ընելով] Ոտքի ձայն կուգայ, էլէնօն է կարծիմ, ձայն մի հաներ որ կասկածի տեղ չտանք:

[Ելենօ յուզւած կը մտնէ Զաւենի սենեակը]

ՏԵՍԻԼ. Ը.

ԷԼԷՆՕ. — [սրաբեկ ու ուսարած] Զաւէնը օթօմապիլով ուրիշ աղջիկի մը հետ... [վայրկեան մը լուռ ու մտածկոս] Անկարելի է, անկարելի է, Զաւէնը... բայց միթէ՞ կարելի է այսքան լսառնութիւն, և այն ալ Զաւէնը... [լուռ եւ ինքնախաբ շետսով] Որքան յիմար եմ, կարծիս նոր ճանչնալ կը սկսիմ Զաւէնը. կիներ ո՞րքան նախանձոտ ու չարամիտ են... [լուռ] Բայց ինչո՞ւ չեմ կրնար հեռացնել այդ տանջող մտածումը միտքէս... Ո՞չ, ո՞չ, անկարելի է սիրել ու չնախանձիլ... [ցաւագին շետսով] Ինչպէս կը րնայ այն սէրը, որ աստւածային էր, այսքան չուտ ցնդիլ. բայց մարդե՛ր, մարդե՛ր... ինչեր չէ կարելի ակնկալել այս մարդկութենէն... Ո՞չ,

Զաւէն... [ինեկեկալով կ'ինայ անկողնին վրայ] [լուռ]

ԹԵՅՏԻ. — [Հմայեակին] Ճիշդ ատենն է, սպասէ... [կամաց մը կ'ենէ սենեակէն եւ կուգայ էլէնօնին բոլ] Ի՞նչ է, էլէնօ, ինչո՞ւ այդպէս յուզւած ես, հրա՞նեկ ես...

ՀՄԱՅ. — [ներսէն] Ի՞նչ ձարպիկ կեղծաւորութիւն...

[Ելենօ կը հեկեկայ]

ԹԵՅՏԻ. — Կուլա՞ս ինչ, ի՞նչ կայ աղջիկս...

ԷԼԷՆՕ. — Ո՞չ, թէյտի, թէյտի... երջանկութիւնը այս աշխարհի վրայ օ՞ր մըն է մինակ...

ԹԵՅՏԻ. — Ի՞նչ բաներ կը խօսիս, էլէնօ, կարծես տղայ ես տակաւին: Ի՞նչ, թէ ոչ Զաւէնին հետ ուրիշ աղջիկ մը տեսար՝ այդ է որ քեզ այսափ յուզեր է: [Ելենօ կը հեկեկայ] Ա՞... տոկէ աւելի ի՞նչ կը սպասես, ան ալ Զաւէնէն, [գուրգուրանին] ինքզինքդ մի տանջեր, էլէնօ, եթէ անոր համար աղջիկ կայ, քեզի համար ալ տղայ շատ...

ԷԼԷՆՕ. — Ի՞նչեր կը խօսիս, թէյտի...

ԹԵՅՏԻ. — Ես արգէն շատոնց կ'ուզէի խօսիլ քեզի որ Զաւէնի խօսքերէն չխարւիս, ան մէկ կողմէն քեզի կը ձառէր միւս կողմէն ուրիշ աղջիկներու հետ էր:

ԷԼԷՆӨ. — [յուզւած] Սո՞ւտ ես, թէյտի, սուտ կը խօսիս...

ԹԵՅՏԻ. — Լա՛ւ որ գուն աչքովդ տեսար. և տակաւին մինակ տտ ալ ըլլա՞ր...

ԷԼԷՆӨ. — [աղաչելով] Խօսէ, թէյտի, ի՞նչ կայ, տակաւին այդ չբաւե՞ր...

ՀՄԱՅ. — [ներսէն ուշադիր հետեւելով խօսերուն] Այդպէս, այդպէս, կեցցե՞ս, մատուկ, այդ-

պէս թունաւորէ այդ քածին մինչեւ հոգին . . .
ՔէՅՑԻ .—Կը խօսիմ քեզի և տակաւին ուրիշ
յայանութիւններ ալ կ'ընեմ, եթէ մինակ ինձ
խոստանաս որ չես յուզւիր: Տղայութիւն չուզեր
ելէնօ', Զաւէնին հոգը չէ թէ դուն կը տառա-
պիս, և յիտոյ կ'արժէ՞ Զաւէնի պէս անօթի չու-
նի մը մասին այսքան տանջւիլ . . .

ԵԼԷՆՕ .—Խնդրեմ, Քէյտի, ըսէ՛, ի՞նչ որ կ'ու-
զես, ըսէ՛, բայց մի՛ նախատեր Զաւէնը, որով-
հետեւ եթէ ան զիս խարած իսկ ըլլայ, ես կը
սիրեմ զինքը:

ՀՄԱՅՅ .— [դժգոհ] Սատկէ՛, քա՛մ . . .

ՔէՅՑԻ .— Հա՛ւ, հանդարտէ հիմա . [ծոցեն նա-
մակ մը կը հանի] տե՛ս, աս նամակը . . .

ԵԼԷՆՕ .— [ցատկելով] Ի՞նչ է այդ, տո՛ւր, խնդ-
րեմ, տո՛ւր:

ՔԲՅՑԻ .— [Ես բաւելով] Զէ՛, հանդարտէ նախ,
ես քեզ հոգալով է որ կ'ըսեմ, եթէ ոչ արդէն
ամէն բան պիտի գիտնաս:

ԵԼԷՆՕ .— Տո՛ւր, Քէյտի, տո՛ւր, մի՛ երկարեր
տառապանքս, արդէն երկար տառապեցայ . . .

ՀՄԱՅՅ .— Այդպէ՞ս . . . մարդ աշխարհի վրայ-
ձիւաղութեան գործը կնիկներուն յանձնելու է.
կեցցեն, ճատու՛կ, կեցցեն . . .

ՔէՅՑԻ .— Այս նամակը Զաւէնինն . է անցած
օր նրանցքին մէջ ինկած էր գտայ, մատածեցի-
քեզի տալ, որովհետեւ, խեղճ աղջիկ, դուն հս
որ ամէնէն աւելի պիտի տառապիս . . . Ո՞ւ գի-
տէ, թիրեւո գիտմամբ ձգեր էր որ դուն գրտ-
նես, կ'երեւի քաջութիւն չունի ուզզակի ըսե-
լու: Ի՞նչ պիտի ընեն, բոլոր էրիկ մարդերն ալ
այդպէս են, կնիկները իբր հանցքի առարկայ
կը գործածեն և երբ կը կշտանան՝ աչքերնին.

ուրիշ տեղ կը գարձնեն:

ԵԼԷՆՕ .— Խնչեմ կը խօսիս, Քէյտի, ինչե՞ր կը
խօսիս . . . խնդրեմ, տուր ինձ այդ նամակը . . .
[կը յափէտակէ նամակը, Քէյտին չտալ կը ձեւա-
ցրնե բայց կը բողու որ առնե]

ՔէՅՑԻ .— Մի՛ յուզւիր, ելէնօ, տղայութիւն
չընես, հոգդ անգամ մի՛ սեպեր, քեզի համար
երիտասարդ չպակսիր . . . [դուրսէն զանգակի ձայն
կը լսի] Դուռը կը զարնեն, ես կ'երթամ, ելէ-
նօ', բաջ եղիր . . . [դուրս կ'ենի եւ կամաց մը
կը մտնի Հմայեակին սենեակը]

ՀՄԱՅՅ .— [Ճեռքը բռնելով Քէյտին] Է՛, Կեց-
ցե՞ս, ատկէ աւելի ճարպիկութիւն չէր ըլլար . . .

ՔէՅՑԻ .— [կամաց մը] Կամաց խօսէ՛, կրնայ
լսել . . .

ՀՄԱՅՅ .— Այնպէս ըրիր որ, կարծեմ ականջ-
ներն ալ խուցան, ձայն չէ եթէ հրացան պար-
պենք չիմանար:

ԵԼԷՆՕ .— [նամակը նիտելով] կը բանայ, կը
կարգայ. յուզումի, սերի, ցաւի, ատելութեան
կծկումներ կ'ունենայ, աշենքը կը օփի, կրկին կը
կարգայ] [կը հնայ] Զաւէն . . . ո՞հ, ասկէ աւելի
մեծ ճիւաղութիւն կ'ըլլա՞յ . . .

ՔէՅՑԻ .— [Հմայեակին] Մտիկ ըրէ . . . [Երկու-
քը լարւած մտիկ կ'ընեն]

ԵԼԷՆՕ .— Սէ՛րս, սէ՛րս . . . ո՞հ, մարդեր ձեր
գլուխին թո՞ղ ատելութեան կայծակ գառնայ . . .
[կը հեկեկայ, խենդի շարժումներ կ'ընէ] կը բը-
զըքտեմ քեզ Զաւէն, կը բգքտեմ քու սիրտգ և
անկէ լս սերս կը պահանջեմ, այսքան վատօրէն
խարե՞լ . . . [կը հեկեկայ եւ ուժասպառ կ'ինայ
անկողնին վրա]

ՔէՅՑԻ .— [մտիկ ընելով] Զայնը կտրեցաւ . . .

ԱՌ, գուրսէն ոտքի ձայներ կուգան. Զաւէնն է արդեօք, բայց երկու մարդի ոտքի ձայն է: [աւելի ուշադիր մտիկ կ'ըն] Այո', Զաւէնն է, ինքը. աղջիկի ձայն մըն ալ կուգայ, կարծիմ նոյն աղջիկն է... աւելի լաւ...

ԵԼԵՆՈ.—[Կը կանգնի բոլորովին ընկնւած ու հեկեկուն] ինքն է, ա'ս, Զաւէնն, ինչո՞ւ այսքան անզութ...

[Զաւէնի սենեակին դուռը կը բացւի, սեմին վրայ կ'երեւին Զաւէն եւ Քարերին կարմրած աշերով ու նկուն. Զաւէն ժպիտով մը էլենօին նայելով որ արտասաւալից կը նայի իրեն]

ԶՈՒԻՆ.—[ցուցնելով էլենօն] Ահա կինս, Տիկին էլէնո Զաւէն...

[Քարերին կ'ուշաբափի, Զաւէն կը բռնի զայն, էլենօ կը վազե դեպի Զաւէն, Հմայեալ եւ պառաւը արձանացած կը մնան]:

Վարագոյրը կ'իջնէ

ԱՐԱՐԻԱԾ Դ.

Թեմք կը ներկայացնէ Լայրնս գործարտնի տոքեւի հրապարակը. երկու կողմէն, աջէն ու ձախէն փողոցներ կը բացւին հրապարակին վրայ. նակաաը կը բռնէ: գործարանը, որի պառուևաններուն մշշ գործաւորներ կ'երեւին. ասդին անդին գործարաւ ընող գործաւորներ փողոցներուն թերանները կը պրարտին՝ աշենքնին չորս կողմ. գործաւորներ գուարան կը շասպեն. ժամանակը առտուն ժամը վեցունիսն է:

ՏԵՍԻԼ Ա.

ՄԱՐՄԻՐԱՅ. — [գեափի գործարան գացող գործաւորի մը մօսենալով] Պարո՞ն, կը հաճի՞ս ըսել թէ՝ կօշիկ արգուկո՞ղ ես:

Ա. ԳՈՐԾ. — [կանգնելով] Այո':

ՄԱՐՏ. — Կուզէի ըսել թէ՝ այդ ձիւզի գործաւորները գործագոււ ըրած են, եթէ գործաւորներու շահը պաշտպանել կ'ուզեն՝ մի՛ գործէր:

Ա. ԳՈՐԾ. — Իրա՞ւ կ'ըսես. ապա մեզի այդպէս բան չըսին. Հմայեակ անունով երիտասարդ մը զիս զրկեց:

ՄԱՐՏ. — Բնական է չեն ըսեր. իսկ այդ Հմայեակը սիկիներ գանելու գործակալ է:

Ա. ԳՈՐԾ. — [ընդիատելով] Վայ սրիկայ, վայ... Կեանքիս մէջ երբեք սիկիութիւն չեմ ըրեր և չպիտի ընեմ. ձեզի հետ եմ, ընկե՛ր: Կեցիր, ինձի հետ ուրիշներ ալ պիտի գալին, եթէ արդէն ներս չեն մատած՝ անոնց հասկցնեմ ինոգիրը: Ծորս կողմը կը նայի:

ՃՈՐՃ. — [միւս կողմը ուրիշ գործաւորի մը] Բնկե՛ր, եթէ ձշմարխ գործաւոր ես մի՛ երթար, պատեղ գործագոււ կայ:

[Գործաւորը առանց մտիկ ընելու կ'անցնի]

Ա. ԳՈՐԾ .— [Բ. Գործաւորին մօտենալով՝ ծանօթիք պէս] ՍԵՅ, ո՞ւր կ'երթաս, խարսեր ենք. այստեղ գործադուլ կայ:

Բ. ԳՈՐԾ .— Իրա՞ւ կ'ըսես. լա՛ւ, այն ատա՞ս...

Ա. ԳՈՐԾ .— Ես այստեղ պիտի սպասում, որ պէս զի մեր միւս ընկերները չթողում որ սքէց փութան երթան:

ՃՈՐՃ .— [Գ. Գործաւորի մը՝ որ դէպի գործարան կը դիմէ] Պարո՞ն, գործադուլ կայ. մի՛ երթար:

[Գ. Գործաւորը անձայն կ'անցնի] [Ճան Մարտիրոսին] Հայ է, Մարտիրոս, դուն խօսէ:

ՄԱՐՏ .— ՍԵՅ, պարո՞ն, քեզի կ'ըսէ, գործադուլ կայ. ամօթ է հայ անունին, մի՛ երթար, մտածէ թէ դուն ալ մեզի պէս գործաւոր ես:

[Գործաւորը անձայն գործարանի դուռն կը մննէ]

ՃՈՐՃ .— [մօտենալով Մարտիրոսին] Ի՞նչ ընկեր է այս տեսակ շանձագերուն:

ՄԱՐՏ .— Ի՞նչ ընկերու է. քիթերնին բերանանին կոտրտելու է. խօսք չհամցողին ի՞նչ կ'ըսնեն:

ՃՈՐՃ .— Նա՛, հատ մը եւս: [Գ. Գործաւոր մը դէպի գործարան կը դիմէ]

ՄԱՐՏ .— Պարո՞ն, գործադուլ կայ այստեղ:

Դ. ԳՈՐԾ .— [Խալելով] Հոգու չէ:

ՄԱՐՏ .— Դուն մարդ չի՞ս, գործաւոր չի՞ս:

ՃՈՐՃ .— Ի՞նչպէս հոգդ չէ, քեզի հոգդ ընկել կուտամ:

Դ. ԳՈՐԾ .— [կանգնելով] Ի՞նչ ըսել կ'ուզես. ես աղաս եմ ուզած տեղու գործելու:

ՃՈՐՃ .— [առաջ անցնելով] Այս', երբ գործադուլ չկայ. իսկ հիմա աղաս չես:

Դ. ԳՈՐԾ .— [Տեղի տալով կը բալի] Դժոխված գնա:

ՃՈՐՃ .— Քեզ դժոխված կը զրկեմ [յարձակելու դիրք կը բռնի. գործաւորը կը խուսափի եւ ներս կը մսնէ] Ճան ձագ, թող սպասէիր և տեսնէիր թէ՛, ո՞գ դժոխված կ'երթայ:

ՄԱՐՏ .— Ուիլելում... [Ուիլելմ ներս կը մսնէ]

ՏԵՍԻԼ Բ.

ՆԱՅՆԵՐ ԵՒ ՈՒԽԵԼՈՐ

ՈՒԽԵԼ .— Ճատ սքէփներ գացի՞ն:

ՄԱՐՏ .— Քանի մը հատ. իսկ սա երկուքը, [ցուցնելով ես կեցողները] հոգիները սիրեմ, գործաւոր լսածդ այդպէս կ'ըլլայ. մէկ խօսքավ ետ կեցան և կը սպասէն որ իրենց ընկերներն ալ չթողուն. Հմայեակը գացեր խարելով զրկեր է մսնք:

Այս միջոցին գործաւորները կ'անցուդարձին, բանրողներ անոնի ես կեցնելու փորձեր կ'ընեն. ուսանէ կը կանգնին կը խօսակցին, ուրիշներ անտրեր գործարան կը մսնեն]:

ՃՈՐՃ .— [մօտենալով Ուիլելմին] Ուիլ, ուրիշ կերպ չկայ, բռունցքի ուժը գործ կը տեսնէ. Երբեք խնայելու չէ: Քիչ մը առաջ շանձագ մը կար չուտ փախտւ:

ՈՒԽԵԼ .— Ամէնէն առաջ Հմայեակին, Հմայեակին. ան սրբկան շատ առաջ գնաց: Իմացա՞ք, երէկ իրկուն այն խոփածին հետ քանի մը հատեր ալ թապլցուցեր են:

ՄԱՐՏ .— Այս', աղէկ ըրեր են. այնպէս ընկեր է որ ամիսներով աեզերնէն չկընան շարժիւ:

ՃՈՐՃ .— Հմայեակը աղէկ գրամ կը չինէ հիմա. ամէն մէկ գործաւորի համար տասը տօլաբ

կ'առնէ . անոր քիթէն բերանէն բերելու է այդ
գրամները :

ՈՒԻԼ .— Ամէն գիտով անոր կը հասկցնեմ առ
[բունցքը կը ցուցնէ] բռունցքին ծանրութիւնը :
Տեսնենք ինչպէս Կ'ըլլայ սքէփութիւնը : Օր մը
պիտի մեռնիմ՝ թող հմա ըլլայ , ես զինքը շան
սատակ հանելէս վերջ . . . [կամաց] ձանը ի՞նչ ե-
ղաւ . ներսի գործերը ի՞նչպէս են :

ՃՈՐՃ .— Շատ հիանալի կը գործէ . քանի մը
հոգի գուրս հանեց . միայն թէ վախնամ մատնւի :

ՄԱՐՏ .— Կարծեմ արդէն կասկածւած է . գի-
տէք գուշ Հմայեակը ի՞նչ օձի ձագ է . . . Եթէ
ձանին պէս քանի մը հոգի ունենայինք ներսը ,
շատ բան կրնային ընել . կարծեմ գործատէրը
բաւական չատ վեասւած է :

ՈՒԻԼ .— Թող որ վեասւի . մինչեւ անօթի մեռ-
նիւս պիտի դիմանամ . և կարծեմ այս գործա-
դուլը անպայման պիտի յաջողի :

ՃՈՐՃ .— Ճանը Կ'ըսէր երէկ իրիկուն թէ՝ բո-
լոր գործերը աւրեր են . սքէփներուն հոգը չէ ,
գրամ առնելները կը նային :

ՄԱՐՏ .— Մեզի գէմ կուելէ վերջ բոլորն ալ
թող գծոնք երթան :

ՃՈՐՃ .— Ի՞նչ սրիկաներ են անոնք , միլիոն-
ներ կը ծախսեն մինակ թէ՝ մեզի գերի ընեն .
բայց այս անգամ պիտի տեսնեն անոնք թէ՝ գոր-
ծաւորները յաւիտենական սարուկներ չեն :

[Այս միջոցին աղմուկով մը գործարանին դու-
ռը կը բացի եւ հարւածներու ու նրմաններու
տակ ձանը երեսի վրայ փողոց կ'ինայ . տղանե-
րուն ուշադրութիւնը այն կողմ կը դառնայ]:

ՏԵՍ ԻԼ Գ .

ՆՈՅՆԵՐ ԵՒ ՃԱՆ [ինկած]

ՈՒԻԼ .— Ճա՞նը [բոլորը դէպի այն կողմ կը
վազեն ու կը վերցնեն]

ՄԱՐՏ .— Ի՞նչ պատահեցաւ Ճան . . .

ՃԱՆ .— [կատադրեհ] Մատներ են . . . հազիւ
կրցայ ինքզինքո ազատել . պիտի սպաննէին :
[դեպի վեր գործարանին պատուհանները նայելով ,
ուր սեփներ կանգնած են կը խնդան՝ կը պոռայ] Դուն ,
անիմծած , գուն անշուշտ գուրս պիտի
ենես , քու վարձքդ կուտամ . անշուշտ այս պա-
տերուն մէջ չպիտի սատկիս ա . . .

ՈՒԻԼ .— [վեր նայելով] Դա ապո՞ւչն է . . . [բո-
լունցքը վեր բռնելով] Դուն , շան զ ուակ , գունն ,
վոր չի գա՞ս , եթէ քաջ ես՝ գուրս չելնես . . .

ՊՈՏՈՒՀԱՆՆԷԼ .— Դժոխվք գացէք . . .

ՈՒԻԼ .— Կը տեսնեինք . . .

ՄԱՐՏ .— Սպաննել . . . այս , որովհետեւ մենք
չենք սպաններ , այս . . .

ՈՒԻԼ .— Ուժն ու օրէնքը իրենց կողմը ըլլա-
լէ վերջ տակաւին շատ բան կ'ընեն . . . սպան-
նե՞լ , շատ լու , թող գործաւորները գիտնան
ասկէ վերջ թէ սպաննութիւն ալ պէտք է
ընել . . . [գործարանին դառնալով] Այս , պարոն
կայշնո , գուք մեզի կը սովորեցնէք սպաննել . . .
ե . կը ինդաք անշուշտ ապուշի պէս իրար լս-
պանոց գործաւորներուն վրայ . . . բայց շուտով
կը հանի գործաւորի գիտակցութեան օրը ու
ձեզ կը սպաննէ . . .

ՃԱՆ .— Սրիկային մէկը այնպէս զարկաւ կը ու-
նակիս որ . . . [գործարանին դառնալով] մէկին
տեղ տասը փոխարինել ուխտա թող ըլլայ . . .

ՄԱՐՏ. — Անոնց կեանքն ալ ապահովւած է, փոլիսներով պաշտպանւած. փոխանակ կառավարութիւնը անիրաււածները պաշտպանելու, գողերն ու աւազակները կը պաշտպանէ:

ՃԱՆ. — Կուգէ Աստւածի հրեշտակներու գունդովը թող պաշտպանւած ըլլայ, ևս մահը աչքիս առնելէ վերջ...

ՈՒԻԼ. — Սկսելու է, սկսելու է, ըլլալիքը ինչ որ է՝ թող շուտ ըլլայ... զարնելու է սքէփին ալ, փօլիսին ալ, գործատէրին ալ, խնայելու չէ և ո՞չ մէկին: Օրէնքը որ մեզ շպաշտպաներ, օրէնքը որ անօրինութիւն կ'ընէ, թող անօրինութիւնն իր օրէնքը գործադրէ... [գործառնվագործը կը սույն ժամը եօրը յայտարարելով]

ՃՈՐԾ. — Ա՛խ, գիտակից գործաւորութիւն, անգում մը ե՞րբ այս քափիթալիստի ծաղրող սուշումը իր կոկորդին մէջ պիտի խեղզես...

[Բեմին աջ կողմեն միւզիքի ձայն կուգայ, բոլոր դեպի այն կողմ կը դառնան]:

ՈՒԻԼ. — Ա՛, թափորը... [ձեռքի գործարանին կողմը բարձրացնելով] Այսպէս պիտի պատասխանենք քու շնական ունցիդ, պարօն Լայնս... [գեպի աջ երալով] Հուրբէյ... նւագեցէք, ընկերներ, նւագեցէք, այդ երգը գործաւորութեան յազթանակը կ'ազգարարէ...

ՃՈՐԾ. — Մարկ ըրէք, աղաք, մտիկ ըրէք, ինթէրնասիօնալը, հուրբէյ... կեցցէ գործաւորական համաշխարհին եղբայրութիւնը... [խանդակալու կը ծափանարեն...]

ՔՈՂՈՐԾ. — Զաւէնը, Զաւէնը, հուրբէյ...

[Զաւեն վազելով կը մտնէ]

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆԵՐ ԵՒ ԶԱԷԿՆ [խանդակալան]

ԶԱԷԿՆ. — Մարկ ըրէք, ընկերներ, մտիկ ըրէք գիտակից գործաւորութեան մարտակոչը... Յաղթանակը մօտ է, մօտ է այն օրը որ պարօն Լայնն ափախ խոնարհէ իր գլուխը գործաւորական արգարուժին առջեւ և յարգէ անոր ճշմարիտ իրաւունքները: Նւագեցէք, ընկերներ...

[Միւզիքը նւագելով կերեւնասիօնալը կը մտնէ, բափորն ալ ետեւեն, գործաւորներու եւ ժողովութիւնը բազմութիւն մը կը լեցնէ բեմը]:

ՈՒԻԼ. — Զաւէն, օ՛ն, կարգը քուկդ է. թողարտեղ գիտակցութեան լեզուն բռնատիրութեան պարիսպին առջեւ աղազակէ:

ԶԱԷԿՆ. — [ախտակի մը վրայ բարձրանալով] Քա՞նչ ե՞քք, գործաւոր ընկերներ, յաղթանակը միրն է... երկար տաեն տղբուկ գրամատիւթիւնը մեր արիւնը ծծեց, զիտանք իրենց երեսին պուալ քաջի պէս. «Ալ հերիք է... [կը ծափանարեն] Ալ հերիք է, պարօն Լայնսներ, ա՛լ հերիք է որքան մեր արիւնովը պարարտացաք, ա՛լ հերիք է որքան մեր տղիւութիւնը շահագործեցիք... Ազաշանք մը չէ աս, ընկերներ, չնորհ մը չէ որ կը ինդրինք մինք այս գժոխք-շէնքերէն, այլ բոլորք մը, իրաւունքի պաշտպանութեան համար մարտի հրաւէքը մը: Ընկերներ, կուշի գաշտին վրայ ենք այսոր, յաղթանակին հաւատքովը զրահաւորեցէք, վայ անոր որ գառաւիք կ'ըլլայ, անոր համար յաւիտենական գերաւթիւնը կը սպասէ: Գիւցէք ընկերներ, որ ազգի և ցեղի ոչ մէկ խօսք, ոչ մէկ բառ կոյ այստեղ, ևս հայ եմ բայց գործաւոր, գուք ինչ

որ ալ ըԱՄՔ, իրանտացի կամ հրէսց, յան կամ իտալցի, իմ գործառը եղբայրներս էք... [կը ծափահարեն եւ « նուրբէ յ » կադայակեն] թո՛ղ այդ ձեր ազաղակը գիտակցութեան ազաղակը և եղբայրութեան մռռնչը ըԱՄՑ, անոնք են որ մինակ կը սարսափեցնեն Լալնաները, անոնք են որ անիրաւութեան այս ամբոցները կը սասանեցնեն... Գիտցէ՞ք, ընկերնե՛ր, թէ մենք ենք տէրն ու արտագրողը բոլոր բարիքներուն, մեր միտքն է յշացողը ուժին, մեր խելքն է ստեղծողը մեքենան, մեր քիտինքովն ենք շաղեր այս քարերն ու կղմինտրները, մեր մատերու արիւնովն ենք իւղեր մեքենաները, մե՛րն են անոնք, և պէտք է առնել, պէտք է տիրանալ անոնց... [կը ծափեն] Այս ծափերը, մըստըր Լալրնս, այս ծափերը քու պատճէշիդ ճակատին երէկի սորուկ գործաւորութեան բայց այսօրի յեղափոխածայթ գիտակցութեան ուուժերն են... Անկցի՛ քափիթոլիստութիւն... [ծափեր]

ԲՈՂՈՐԾ.—Անկցի...

ԶԱԻԿՆ.—Կեցցէ գիտակց գործաւորութիւն.

ԲՈՂՈՐԾ.—[ծափելով] Կեցցէ...

[Փօլիսիներ չորս կողմեն վազելով կը մտնեն]

ՏԵՍԻԼ. Ե.

ՓՕԼԻՍՆԵՐ.—[առաջ անցնելով] Բիրերով եւ սպառնական] Յըւեցէ՞ք...

ԶԱԻԿՆ.—Պարո՛ն Օֆիսըներ, դուք իրաւունք չունիք սպառնալու և ո՛չ ալ խաղաղ ժողովուրդը վրգովելու: Այստեղ ո՛չ կոխւ կայ, ո՛չ մարդասպանութիւն: Խաղաղ ցոյցը ամէն քաղաքացիի իրաւունքն է և դուք երբեք չէք կը...

նար այդ իրաւունքը բռնաբարել: Գիտցէ՞ք թէ այս ժողովուրդն է որ ձեզ կ'ապրեցնէ, որ ձեզ շաբաթականները կը վճարէ: Խոկ դուք փոխանակ պաշտպանելու՝ կը սպառնա՞ք...

ՓՕԼԻՍՆԵՐ.—Ո՛չ մէկ խօսք, յըւեցէ՞ք... մեզ այնպէս հրամայւած է...

ԶԱԻԿՆ.—[առանց կարեւորութիւն տալով] Լըսեցէ՞ք, ո՛վ քաղաքացիներ, լսէ դուն, ո՛վ ժողովուրդ և զիտցիր թէ՝ փոլիսները քու պաշտպանութեանդ համար չեն՝ այլ քու իրաւունքներդ յափշտակելու համար սահմանւած...

ՓՕԼԻՍ.—[առաջանալով] Լսէ՛, լսէ՛... [այս միջոցին խառնակուրքիւն կը տրէ, ժողովուրդին մեկ մասը ցրւի կը սկսի, մեկ մասը կը պառչըսայ. « ինչ անիրաւորքիւն է... կ'ուզենի լսե՞լ... խօսէ, Զաւե՞ն... » Հմայեակ բեմին մեկ կողմը կ'եւելի գոհութակ դէմքով]

ԶԱԻԿՆ.—Օֆիսընե՛ր... գիտցէ՞ք թէ՝ պատասխանաւութեան տակ էք... ինչո՞ւ կը յըրւիս, ո՛վ ժողովուրդ, ինչո՞ւ չես պաշտպաներ իրաւունքդ, քանի մը բիրերու առջեւ ինչո՞ւ կանակ կը դարձնես... Արժանի ես դուն որ արիւնդ խմելէ վերջ՝ գիտակից ալ վլայ կոխկուտեն:

ՓՕԼԻՍՆԵՐ.— Լսէ՛, վա՛ր իջիր, անիշխանակա՞ն, ձերբակալւած ես: [կը մօտենան բննելու համար]

ԶԱԻԿՆ.—Զերպակալեցէ՞ք, բայց գիտցէ՞ք թէ անարգարութիւն է որ կը գործէք... ես պատրաստ եմ իմ մահիս գինովը սովորեցնել այս ժողովուրդին թէ՝ գո՛ւք, պարսնե՛ր, գո՛ւք վատեր էք, գուածաններ էք:

[Փօլիսիներ կոչօրէն կը բաւեն վար ու կը կաւելին]

ԶՅԻՒՆ. — Թեւերս կենաք կաշկանդիլ, բայց Արքեք լեզուս ինչո՞ւ կոշտօրէն կը վարւիք, միթէ ոճրագո՞րծ եմ ես. թոյլ աւէք ինձ, ես ակտառէն ու անվախ կրոգամ ձեր գատարաններուն առջև կրկնելու ինչ որ ըսի ու պիտի ըսիմ... [իրացէկելով կ'ուզեն տանիլ. խուճապ, խառնակուրիւն...]. Ընկերներ, քաջութիւն, ես ձեզի հետ եմ միշտ, մի՛ յուսահատիք, յաղթանակը ձմարտութեանն է... [կը տանին, ժողովուրդը այն կողմ կը հայի, այս տեսն Հմայեակն ալ կը դիտէ այն կողմ գոհ դեմքով]]

ԱԽՎԵԼՄ. — [զօրաւոր հարւած մը տալով Հըմայեակի դեմքին] ձիւաղներու ծիծաղը այսպէս կը պատժէն...

[Հմայեակ կ'ինայ, կրկին խառնակուրիւն, պոտ շուրբ, փօխներ կը վազէն դէպի բեմը: Աւիլելը կ'անհետանայ]:

Վարագոյր կ'իջնէ



ԱՐԱՐԻԱՄ Ե.

Ենմը կը ներկայացնէ: Պատարանիք: Խորը եւ բարձր կիսաշրջանակ ամպիտինի մը վրան օրինագիրք մը. անոր առջև եւ աւելի ցած եւ՛ւաւելի խաշը կէս շըրշանակի ամպիտին մը՝ գրագիրներուն համար. Պատարանիքն ձախ կողմը հարցանենողի կանգնելու տեղը՝ պատիկ ամպիտինով մը. Վարք բամեւած տեղ մը՝ վրատարաններու յատուկ տեղը՝ արուներ եւ սեղաններ. Պատարանիքն աջ ու ձախ կողմէ երդւեալ զատաւորներու յատուկ տեղը. Պատարաններու տեղին հանուլ երկար ցանցով բամեւած ամբաստանեաւ — բանատարկեաններու բամենք. Քեմին աշ կողմը վիսանիրու եւ ներկաններու արուներ: Վարագոյրը բացւելուն ներկաններու արուներուն վրայ նասած է երկան բազմուրինի մը. աչի ինկած տեղը կ'երեսին էլլո, Հմայեակ՝ աշքը սեւցած, Հանի՛ գլուխը կապած, եւ ուրիշ գործաւորներ: Փատարաններ իրենց տեկները իրարու հետ կը խօսակցին, հարտուղարներ իրենց տեղը. կադմանկի դուռէ: մը սատիկանի մը առաջնորդութիւնով դաստավարութեալներ իրարու Հզրայւած կը բերին ու երկար ցանցին հանու կը վակելին հետերնեն Զաւէն եւ Աւիլեր. Վայրկեան մը վերը խօսի դաստաւոր ներս կը մանէ, ամրոջ բազմութիւնը ոտիի կը կանգնի: Վայրկեան մը լուս:

ՏԵՍԻԼՈ.

Ա. ՔԱՐՏ. — [ոտիի կը կանգնի ձեռքի բուդրին վրայ կը կարդայ] Աւիլելմ ձէքրի, 160 պրօտէէ: [Ավիլելմ ոտիի կ'ելնի] Աւիլելմ ձէքրի ձերբակալ, ած է Հմայեակ Սարգիսեանը սպաննելու միտումով ծեծած ըլլալուն համար:

[Ավիլելմ ամբաստանալի ամպիտինին վրայ կ'առաջնորդւի]

Բ. ՔԱՐՏ.—[ոտքի կ'ելնէ կը սկսի կարգալ երդումը, որ Աւիլեբմ մտիկ կ'ընէ աշ ձեռք վեր բարձրացուցած] երգւ ընցիր թէ այն խոստափանուաթիւնը որ պիտի ընես գատաւորին և այս դատարանին առջեւ պիտի ըլլաց ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը և ոչինչ բայց միայն ճշմարտութիւնը: [Մարտուղարը կը նսի]. Աւիլեբմ ձեռքը վար կ'իջեցնէ]:

ՀԱԿԱՌՈՒԿՈՐԴԻ ՓԱՍՏԱԲԱՆ.—[ձեռքը բուլը մը կանցի եւ դեպի առաջ կ'անցնի, կը խոնարի դատաւորին առջեւ եւ լեսով] Անունդ ի՞նչ է:

ՈՒԽԼ.—Ուիլելմ ձէքրի:

ՓԱՍՏ.—Քանի՞ տարեկան ես:

ՈՒԽԼ.—Երեսուն:

ՓԱՍՏ.—Ի՞նչ ազգ ես:

ՈՒԽԼ.—Իրլանտացի:

ՓԱՍՏ.—Ո՞ւր կը բնակիս:

ՈՒԽԼ.—160 պրօտուէլ:

ՓԱՍՏ.—Ինչո՞վ կը գրադիս:

ՈՒԽԼ.—Կօշիկ արգուկազ եմ:

ՓԱՍՏ.—Լայնս և բնի. գործարանին դէմ եղած գործադուլին հատ կապ ունի՞ս:

ՈՒԽԼ.—Այս', բանթող եմ:

ՓԱՍՏ.—Հմայեակ Սարգիսեանը կը ճանչնա՞ս:

ՈՒԽԼ.—Այս', գործարանին մէջ ճանչցած եմ:

ՓԱՍՏ.—Կ'ընդունիս թէ դուն ձեծած ես զի՞նքը և վիրաւորած գէշ կերպով, նոյնիսկ սպանել ուզած:

ՈՒԽԼ.—Այս', ես ձեծած եմ Հմայեակը, բայց երբեք չեմ ուզած սպաննել, ձեծած եմ արգիւլու համար զի՞նքը որ գործադուլը չուրէ:

ՓԱՍՏ.—Կարծ պատասխանէ, ուրեմն ձեծած ես:

ՈՒԽԼ.—Այս' ըսի, սրովհետեւ ես իմ ձեռքով ուղեցի իրաւունքս պաշտպաննել:

ՓԱՍՏ.—Բանւորական միութեան անդա՞մ ես:

ՈՒԽԼ.—Այս':

ՓԱՍՏ.—Ծեծը ընկերութեան կողմէ սրոշւած էր թէ դուն անձնապէս ըրիր:

ՈՒԽԼ.—Ես իմ իրաւունքս պաշտպաննելու համար ձեծեցի ըսի, հետեւաբար պէտք չկայ աւելորդ հարցումի:

ՓԱՍՏ.—[Անդացած] Ո՞վ է ձեր առաջնորդը:

ՈՒԽԼ.—Ես իմ առաջնորդը, ես ձեծեցի, ուրիշ բանի չեմ պատասխաններ:

ՓԱՍՏ.—Ո՞վ կազմակերպեց ձեզ:

ՈՒԽԼ.—...

ՓԱՍՏ.—Ո՞վ կազմակերպեց, կը հարցնեմ, պատասխաննէ՞:

ՈՒԽԼ.—...

ՓԱՍՏ.—[աւելի նեղացած] Ո՞վ կազմակերպեց:

ՈՒԽԼ.—Ալ ո՞չ մէկ բառ կը պատասխաննեմ ձեզի. [Դառնալով դատաւորին] Տէր դատաւոր, հաձեցէք ըսել այս մարդին որ չեմ ուզեր պատասխաննել իրեն: Ես չեմ ուրանար որ ձեծեցի Հմայեակը, որովհետեւ օրէնք մը չկար որ իմ գործաւորի իրաւունքս պաշտպաններ: Ես պատրաստ եմ ընդունելու պատիժու:

[Աւիլելմ վար կ'իջնէ ու կ'առաջնորդի իր սեղլ]

ՓԱՍՏ.—[դատաւորին] Տէր դատաւոր, իմ հարցունելու լրացնելու համար պէտք է հարցապըմդեմ միւս ձերբակաւածը՝ Զաւէն Սիրաք:

ՔԱՐՏ.—[կը կարդայ] Զաւէն Սիրաք, 14 Հայ աթրիթ: [Զաւէն կ'առաջնորդի հարցաթեսնութեան

ամպիոնը] . Զաւէն Սիրաք ձերբակալւած է այն-
տառն՝ երբ ժողովուրդը կը գրգոէ եղեր . նա-
խստած է օֆիսը ները , քարոզած է ահիշխա-
նութիւն և ամբաստանւած է իբր հանրային-
բարոյականը խաթարող :

Բ . ՔԱՐՏ . — [Երդումը կը կարդալ . Զաւէն աջ-
ձեռքը վեր մտիկ կ'ընէ] Երգւընցիր թէ՝ կայն խոս-
տովանութիւնը որ պլատի ընես դատաւորին և
այս դատարանին առջեւ , պլատի ըլլոց ճշմար-
տութիւնը , ամբողջ ճշմարտութիւնը և ոչի՞նչ
բայց միայն ճշմարտութիւնը : [Կը նայի բարու-
ղարը , Զաւէն ձեռքը վար կ'իջեցնէ] :

ՓԱՍՏ . — Անունու ի՞նչ է :

ԶԱԻՔՆ . — Զաւէն Սիրաք :

ՓԱՍՏ . — Բանի՞ տարեկան ես :

ԶԱԻՔՆ . — Բանն և եօթը :

ՓԱՍՏ . — Ի՞նչ ազգ ես :

ԶԱԻՔՆ . — Հայ եմ :

ՓԱՍՏ . — Ի՞նչ գործով կը զբաղիս :

ԶԱԻՔՆ . — Փաստաբանական ուսանող եմ բայց
հիմայ բանթող գործաւոր :

ՓԱՍՏ . — Անուսանացած ես :

ԶԱԻՔՆ . — Այս :

ՓԱՍՏ . — Անդխանակա՞ն ես :

ԶԱԻՔՆ . — Չեմ գլտեր թէ՝ ի՞նչ ըմբոնումով
կ'ըսէք այդ բառը :

ՓԱՍՏ . — [Անդացած] Այս՝ կամ ո՛չ , անիշխա-
նակա՞ն ես :

ԶԱԻՔՆ . — Չեմ կրնար պատասխանել առանց
հասկանալու ձեր ըսած բառին իմաստը : Եթէ նել-
կայ սխատէներուն ու օրէնքներուն , որոնք մի-
նակ անարդարութիւն կը գործեն , կուող ըսեւ
կ'ուզէք , այս՝ :

ՓԱՍՏ . — Լաւ . ամուսնութիւնու օրինական
ձմերայս վրած ես :

ԶԱԻՔՆ . — Այս՝ , օրինական իմ լսրոնումովս :

ՓԱՍՏ . — Ունի՞ս ու ե է վկայաթուղթ :

ԶԱԻՔՆ . — Իմ սէրու :

ՓԱՍՏ . — Դուն ես այն Զաւէնը , որ գործաւոր-
ները յեղափոխած է Լալընս և ընկ . թեան դէմ
գործադուլ ընելու համար :

ԶԱԻՔՆ . — Ես ալ կազմակերպւած գործաւոր
մըն եմ , իսկ կազմակերպողը վկայակցութիւնն է :

ՓԱՍՏ . — Դուն թելագրած ես ծեծել ծեր Հա-
մին և Հմայեակը , այնովն է :

ԶԱԻՔՆ . — Ես չեմ ծեծած , իսկ թելեգրութիւն
ընելու պէտք չունէի :

ՓԱՍՏ . — Բաւական է :

ԶԱԻՔՆ . — [Գասաւորին] Թոյլ տւէք , աէր գա-
տաւոր այստեղէն իմանալ իմ դատակիքս պատ-
գամող օրէնքի փաստաբանողները :

ԴԱՏԱԽՈՐ . — [Գլուխը միսական կը օարժէ] :

ԶԱԻՔՆ . — Թէ՝ ես գործաւոր մըն եմ և բան-
թող գործաւորներու մէջ կարեւոր բաժին մը ու-
նեցած՝ այդ իրական է . թէ՝ ես ամուսնացած եմ
առանց կրօնական և քաղաքական պսակի , այդ
ալ իրական է . իսկ թէ՝ ինչո՞ւ զիս այստեղ բե-
րած են չղթայակապ իրը պարզ ոճրագործ մը ,
այդ անիրաւութիւն է , որովհետեւ ես ոչ մէկ
տառն կը հաւատամ որ ո՛չ հանրային խաղաղու-
թիւնն ու ապահովութիւնը վրգոված ըլլում , ո՛չ
ալ հանրային բարոյականը խաթարած : Դատա-
պարտեցէ՞ք զիս , որովհետեւ զօրաւոր էք :

[Կիցնէ ու կ'առաջնորդւի իր տեղը] :

ՓԱՍՏ . — Տէր գատաւոր , յայտնի է թէ՝ Զա-
ւէն Սիրաք իր վրայ գրւած ամբաստանութիւն-

ներէն չկրնար ազատիւ, ինք եղած է կազմակերպաղը գործաւորներուն և յեղափոխութիւն քառակը, արդիւնքը այն եղած է որ գործադուլ եղած է ու հանրային ապահովութիւնը վըրդովւած է: Ահա քանի մը խեղձեր, [մասնացոյց կ'ընէ ծեր Հանին եւ Հմայեակը] որո՞նք վիրաւորւած են, և այսօր իրենց վիրաւոր վիճակով գտատարանիդ առջեւ կը ներկայանան արդարութիւն պահանջելով: Զաւէնն ինք խոստովանեցաւ թէ՝ անիշխանական մըն է, ապացոյցը ան է որ նախատած է օրէնքի պաշտօնեաները երբ ապահովութիւնը պահպանել աշխատած են, արհամարհած է ամուսնական օրէնքը և հանրային բարյականին դէմ ըմբոստացած՝ գործնականապէս անբարսութիւն քարոզած է: Ոչ մէկ կերպով իրնայ արգարանալ ան, իր վրայ կը ծանրան ա.—արիւնայեղութեան, բ.—հանրային ապահովութիւնն ու բարոյականը խաթարողի և գ.—օրէնքի դէմ ըմբոստացողի, անիշխանականի մեղադրանքները: Մինք շատ յաճախ ցաւալի արարքներու առջեւ գտնած ենք այս ազատ երկրին մէջ, ուր այս տեսակ յեղափոխականներու երեւումով արիւն թափւած է, ուր տգէտ գործաւորներ, ինչպէս Ռւիլելմ ձէքրի, գործիք եղած են ասոնց ձեռքը և՝ յեղափոխութիւն առաջացուցած: Իմ պաշտամանեալներս գոհացում կը պահանջեն իրը այս ազատ երկրի քաղաքացիներ, որպէսզի պատժւին իրենց ազատութիւնը բանագատորները: Իսկ պաշտօնակից եղբայրիս, ընդհ, գատախազին կը մնայ իրը արդարութեան պաշտօնեայ և պատասխանատու պաշտամանել հանրութեան ապահովութիւնն ու բարոյականը: [կը նսի]

ԸՆԴՀ. ԴԱՏԱԽԱՉ. — Այստեղ չէ՝ ամէնէն կարեւոր թէ՝ քանի մը հոգիի գլուխ կոտրած է. ծեծողը իր պատիւլ կ'առնէ ու կը զգաստանայ, ո՛չ ալ գործադուլը, որովհետեւ մենք ամէն օր կը տեսնենք նման դէպքեր: Կարեւորը ան է որ ալստեղ, այս ամբաստանւածի ամպիսնին վրայ կանգնեցաւ մարդ մը, որ անպատկառօրէն արդարութեան գատաւորին առջեւ ու այս արդարութեան տաճարին մէջ ինքինքը յայտարարեց իրը անիշխանական: Ինձ պաշտօն յանձնած է իմ քաղաքացիներէս պաշտպանել իրենց դատը. ես պատասխանատու եմ անոնց առջեւ, օրէնքին առջեւ, որի իրը անաշառ պաշտօնիայ արձանագրուած եմ: Տէր գատաւոր, ահա մարդ մը որ չընդունիր ո՛չ օրէնք, ո՛չ կրօնք, որ չյարգեր գարերով սրբազործւած նւիրականութիւններ, որ կ'արհամարհէ ամէն կարդ ու սարք և կ'աշխատի իրեն պէս մարդեր առաջ ցնելով արիւնայեղութիւններ առաջացնել: Ու իլերմ ձէքրի ո՛չ մէկ մեղք ունի բացի իր տգիտութենէն, իսկ այսօր գատարանդ մեծ մեղաւոր մը ունի իր ճիրաններուն մէջ, անոր պատժւելովը և խիստ պատժւելովն է որ մենք պիտի կրնանք խազազութիւնը ապահովել: Օրէնքին անունով, կրօնքին անունով ու քաղաքացիներուս պատասխանատութիւնով կը պահանջեմ ես կամ մշտնշենական բանտարկութեան, որովհետեւ կը հաւաւատամ թէ՝ այդ տեսակ մարդերը կղզիացնելով մինակ կարելի է չարիքը խափանել, կամ այս երկրէն խսպառ արտաքսում... Դուք վճռեցէ՞ք, ինչ որ կը պահանջէ օրէնքն ու կ'ակնկալին քաղաքացիները

ԶԱՒԵՆ.— [կանգնելով] Տէր գատաւոր, ես

փաստաբան չունիմ, և արդարութիւն չէ որ դաշտէք մէկը՝ առանց իր պաշտպանողականը լոելու։ Տարի մը վերջ ուրիշներու դատերը պիտի պաշտպանեմ, թոյլ տւէք տարի մը առաջ իմ դատս պաշտպանեմ։

[Փօլիսներ կ'ուզեն լրեցնել] [Զաւեն պօւալով] Արդարութիւնը բոնութիւն չի նշանակեր, թոյլ տւէք խօսիմ, դարձեալ դատապարտեցէք։

ԴԱՏ.—[կանգնելով] Զգեցէք որ խօսի . . .

ԶԱՒԵՆ.— Լուցէք զիս և դարձեալ դատապարտեցէք, ո՞վ օրէնքի պաշտօնեաներ և գործադրիչներ, լսեցէք և դուք, ո՞վ քաղաքացիներ, որոնց անունով իմ դատակնիքս կը պահանջուի։ Եթէ արդարութեան պաշտպան ու անարդարութեան թշնամի ըլլալ կը նշանակէ անիշխանական կամ ընկերվարական ըլլալ, ես շատ սիրով կ'ընդունիմ այդ անունները իմ ճակատիս ու հպարտօրէն կը յայտարարեմ ինքինքս ընկերվարական, թէեւ գուք թուքով նետել ուզէք իմ երեսիս։ Եթէ այս երկիրը ազատ է, ինչո՞ւ կը բոնադատէք զիս չխօսելու, ինչո՞ւ կը ձերբակալէք գործաւորները, ինչո՞ւ օֆիսորներով ու պէտք եղած ատեն բանակով գործաւոր - ժողովուրդին արիւնը կը թափէք՝ ստրկացնելու համար զայն։ Եթէ արդարութիւնը կ'ուզէք պաշտպանել, արդարութիւն չէ երբեք Ուիլերմ մը պատժել, որ իր իրաւունքը պաշտպանելու համար իր հացը խլողին բռունցքով կը փոխարինէ, ալ պէտք է պատժել այն, որ վատօրէն իր ընկերին հացը կը յափշտակէ, պէտք է պատժել այն, որ հաղարաւոր գործաւորներու արիւնը կը ծծէ. իսկ դուք, ո՞վ օրէնքի պաշտօնատարներ, դուք ձեր օրէնքներով, դուք ձեր բանակով կը

պաշտպանէք գողութիւնը ու կը պատժէք ինքնապաշտպան ճշմարիտ արդարութիւնը։ Ու ես անգամ մըն ալ ու հաղար անգամ կը յատարակեմ այստեղ, օրէնքի այս տունին մէջ թէ՛ ես այդ անարդար օրէնքներուն թշնամի եմ։ Դուք, օրէնքի փաստաբաններ խեցեվճիս կ'արձակէք ինձ դէմ՝ իբր հանրային բարողականը խաթարող, մտիկ ըրէ՛ք, ո՞վ հանրային բարոյականի նախանձախնդիր պաշտպաններ, ես կը յայտարարեմ որ դուք ձեր պաշտպաննել կարծած օրէնքներով գո՞ւք կը խաթալէք, կ'եղանէք հանրային բարոյականը, գուք այս սխտէմով կը ստեղծէք հանրատունները, իսկ ես, [ցաւցնելով էլինօն] ահա կինս, որ հպարտութիւնով կրնամներկայացնել աշխարհին, անոր բարոյականը կազմով անրարոյական կեղծիքներուն ու սրբապիղծներագործուներուն գէմ ցցւելով . . . Ու դարձեալ և հազար անգամ կը յայտարարեմ որ իմ սէրս այնքան բարձր է, այնքան մաքուր որ ձեր օրէնքներու ու կրօններու միջնորդութիւնները մինակ կրնան պղծել զայն . . . Ահա՛ կինս, ո՞չ այն գաղտնածածուկ անրարոյիկ-բարոյականով կինը, որ ձեր օրէնքներով կը պաշտպանէք ու ձեր կը-րօններով կը խնկարէք, այլ այն կինը՝ որ անօրէնք սէրովս է պսակւած . . . կը դատապարտէք զիս որովհետեւ ո՞չ թէ արդար էք այլ զօրաւոր գատապարտեցէք զիս ցմահ բանտարկութեան, ես այնտեղ ալ նոյն ըմբռութը պիտի ըլլամ ձեր օրէնքներուն, զօրաւորի՝ բայց երբեք իրաւունքի օրէնքներուն, ստրկութեան ու կեղծիքի՝ բայց երբեք պաշտելութեան կրօնքներուն գէմ։ աքսորեցէք զիս, ես իմ ըմբռութի արդար հոգիս չ'ըս հովերով պիտի խօսիմ . . . [Ասեն մը լուր]

ԴԱՏ.—[կանգնած ու չոր, խորհրդաւոր տեսով]
Ուժեղմ ձէֆրի, քսան և հրնգ առլար առւգանք
և Հմայեակի բժշկական ծախուերը։ Զաւէն Սր-
բաք արտաքսում Մ. Նահանգներէն։



2013

14465

